


Handwritten text at the top of the page, possibly a title or header, written in a cursive script.



ՏՂԱՅՈՑ

ԻՐԵՆՑ ԾՆՈՂԱՑ

ԵՒ

ԻՐԵՆՑ ՄԵԾԵՐՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷ




ԱՐԴԵԱՄԲ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՇԻԿԹԱՇ



ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՊՕՂՈՍԻ ՆՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ռ. Յ. ՔԻՒՐԳՅԵԱՆ

— 1867 —

5741

ՏՊԱՐԱՆԿԱՆ
ԳՐԱԳՐԱՆ
ԱԿՏԻՆԻՍԻՍ

47

Ս. ազգօգուտ ընկերութիւնն :

Թէպէտ և Գրքուկիս առաջին տպագրութիւնը՝ Խասգիւղի Ներսիսեան վարժարանին աշակերտաց ընկերութեան արդեամբն էր քայց որովհետեւ այն ընկերութիւնը, որուն անունը ցաւելով կ'ըսեմ, շատ մը ազգօգուտ գիրքերու ճակատը դրոշմուած տեսնել կ'երեւակայէինք, դժբաղդաբար հիմա իր գոյութիւնը կորուսած է. եւ մինչեւ Ներսիսեան վարժարանը իր ատենէ մ'ի վեր կորուսած նախանձելի բարեկարգութիւնը վերստին ձեռք չձգէ, և մինչեւ բարերար եւ առաքինի ձեռք մը իր պաշտպանութիւնը չկարկառէ, յիշեալ Սանուց ընկերութեանն ալ իր նախկին յարատեւութիւնը և արդիւնաւորութիւնը ձեռք բերել դժուարին կը սեպուի: Վասն որոյ սոյն գրքուկիս երկրորդ տպագրութիւնը պարտաւորեցայ յանձնել Պէշիկթաշի Հայկազնեան ընկերութեան, որ արդէն ծանօթ է իր արդիւնքովը Հայ հասարակութեան: Ուստի իմ անկեղծ շնորհակալութիւնս կը յայտնեմ Հայկազնեան ընկերութեան, որ իմ այս ջնշին աշխատութիւնս պատուելու կը բարեհաճի:


այս է իմ ուրախութիւնս, եւ վարձքս այն՝
եթէ Հայկազն մանկտին եւ թերեւս հասակա-
կիցներս, հոս Գաղղիացի համբաւաւոր հեղի-
նակի մը գրածներէն օգուտ քաղեն, վասն զի
չեմք կրնար ուրանալ, որ Հայ ազգին մէջ ալ
այս նախնական ուսմունքին մեծ կարօտութիւն
կայ:

Իմ խորին յարգանացս հաւաստիքը նուի-
րելով Ազգօգուտ ընկերութեան՝ մնամ, յա-
րատելութեան և երջանիկ յաջողութեանց նո-
րին ցանկացող:

Ն. ԶՕՀՐԱՊԵԱՆ

30 Օգոստոս 1861





ՏՂԱՅՈՑ

ԻՐ ԵՆՑ ԾՆՈՂԱՑ

ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏՔԵՐԸ



ԾՆՈՂԱՑ ՀԱՄԱՐ ՊԱՐՏՔ ԵՂԱԾ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒԱԾ ԻՐ Հինգերորդ պատուիրանին մէջը մարդուս ըսաւ .
“Քու հայրդ ու մայրդ պատուէ՛ ,
որ երկայն կեանք մը վայելես ,” :

Այն քաղաքական օրէնքը՝ որոնց ամեն ազգ պարտաւոր են հնազանդելու , կը պարունակէ սա յօդուածը . “Տղայ մը ամեն հասակի մէջ

իր հայրն ու մայրը պիտի պատուէ
ու մեծարէ. անոնց իշխանութեանը
տակն է ինչուան որ այրութեան
հասակը հասնի, = Ուրեմն Աստ-
ուածային եւ քաղաքական օրէնքը
մի եւ նոյն բանը կը հրամայեն. կը-
րօնքն ու հայրենիքը, որոնք իշխա-
նութիւն ունին մեր վարքը ուղ-
ղելու, մի եւ նոյն պարտականու-
թիւնը կը դնեն մեր վրայ:

Բայց թէ որ վերոյիշեալ Աստուծոյ
պատուիրանքը ու քաղաքական օ-
րէնքը մեզի ծանօթ չ'ըլլային ալ, մեր
ճնողքը պատուելու պարտականու-
թիւնը միշտ նուիրական բան մը պի-
տի ըլլար, որովհետեւ նոյն օրէնքը
գրուած է մեր սրտին մէջը. անիկայ
մեր բնութեանը մէկ օրէնքն է:

Արդարեւ ապերախտութիւնը
մոլութիւններուն ամենէն ատելին
է, եւ երախտագիտութիւնը պարտ-
քերուն ամենէն սրբազանն է:

Ուրեմն մեր հօրմէն ու մեր մօր
մէն աւելի երախտագիտութիւն ու
բո՛ւ կը պարտաւորինք :

Մենք չկայինք. եւ Աստուծմէ
ետքը, մեր կեանքը մեր ծնողացը
պարտաւոր ենք. անոնցմով է որ կը
վայելենք այն բոլոր բարիքը, որ նա
խահնամութիւնը շնորհած է մարդ-
կային աղգին, անոնցմով է որ մենք
եղած ենք մարդ, քրիստոնեայ եւ
Հայ, անոնցմով է որ ունեցեր ենք
Աստուած ճանչնալու եւ անոր ծա-
ռայելու անգին երջանկութիւնը,
եւ առաքինութեան համար Աս-
տուծոյ խոստացած վարձքերը վա-
յելելու յոյսը :

Մենք տկար ու ամեն տեսակ ցա-
ւերու ենթակայ կը ծնանինք, մեր
ծնողքը անոնցմէ մեզ կը պահպա-
նեն անխոնջ եւ անյաղժելի գորո-
վանօք ու մտադրութեամբ : Մենք
կը ծնանինք ամեն բանէ զուրկ, մեր

Ծնողքը մեզի հարկաւոր եղած օգնականութիւնները առատօրէն բնելէն ետ չեն կենար :

Մենք կը ծնանինք տգէտ, մեր ծնողքը մեր դատողութիւնը կը կըրթեն, մեզի կը սովբեցնեն ամեն բան ճանչնալ ու խօսիլ. այն ամեն բաները որոնք մեր ծնած ատենը չունինք, ու մեծցած ժամանակնիս մեզի հարկաւոր են, կը տրուին մեզի իրենց խնամքովը :

Մեր ծնանելէն ալ առաջ մեր հայրը կը մտածէր մեզի համար, կ'աշխատէր մեզի օգտակար բնութիւնները հաւաքելու, կարելի եղածին չափ մեր օգտին համար մեծ խնայութիւններ կ'ընէր, շատ բաներէ ինքզինքը կը զրկէր, որ մեզի բան մը չպակսի :

Մեր մայրը կարելի է որ մեզի համար՝ հօրերնուս ալ աւելի բաներ կ'ընէ. իր տղան իր որովայնին մէջը

կը կրէ, անոր կեանք կուտայ, կը
դիեցընէ անիկայ ու իր բոլոր խը-
նամքները առատօրէն կը մատակա-
րարէ: Սակայն նորածին տղան դեռ
չձանչնար զանիկա՝ ուսկից որ այնչափ
գորովանաց նշաններ կ'ընդունի.
չկրնար իմացընել իր պիտոյքը, բայց
մայրը կը ջանայ գուշակել ինչ որ անոր
պէտք է, ինչ որ անոր հաճելի կրնայը-
լալ. չդադրիր անոր համար գիշեր ցո-
րեկ չարչարուելէն, առանց գիտնա-
լու թէ այնքան նեղութեանց փո-
խարէն ինչ վարձք պիտի ընդունի:

Տղու մը հիւանդութեան ատենը
հայրն ու մայրը անոր համար ժրա-
ջան խնամք կը տանին, չեն հոգար
իրենց անձնական առողջութիւնը՝
անոր բժշկութեան հսկելու հա-
մար:

Կը դողան միշտ որ չ'ըլլայ թէ բանէ
մը զրկուի, եւ իրենց առ Աստուած
մատուցած աղօթքին մէջը անդա-

դար իրենց աղբւն համար բարիք կը
խնդրեն :

Երբոր ուսման պարապելու կա-
րող կ'ըլլայ, կը փութան անոր սով-
րեցնել ինչ որ օր մը պիտի կրնայ ի-
րեն օգտակար ըլլալ : Անիկա դըպ-
րոց կը խրկեն, անոր կրթութեանը
համար ամենեւին ծախքի չեն խնա-
յեր . բանի մըն ալ զանցառութիւն
չեն ըներ անիկայ առաքինութեամբ
զարդարելու, եւ կրօնից, արդա-
րութեան ու պատուոյ զգացմունք-
ներով անոր սիրտը գրաւելու :


Անիկա իր ապրուստը պատուա-
ւոր կերպով հոգարու վիճակին մէջ
կը դնեն, իրենց աստիճանին ու հա-
րրատութեանը համեմատ : Նաեւ
երբեմն աղէկ վիճակի մը մէջ դնե-
լու համար, իրենց կարողութենէն
վեր ծախքեր եւ զոհեր կ'ընեն :

Երբոր ամուսնանալու հասակին
կը հասնի, իրենց ունեցածին մէկ

մասէն զիրենք կը գրկեն, եւ մնացորդն ալ կը խնայեն մեծ ջանքով իրենց մեռնելէն ետքը անոր ձգելու համար :

Մէկ խօսքով, անդադար դքադած են իրենց տղուն երջանկութեանը վրայ, անոր համար անփոփոխելի գործովանք մը ունին, կարծես թէ միայն անոր համար կ'ապրին :

Ուրեմն տղայ մը ի՞նչպէս չունենար բոլոր իր կենացը մէջ չափազանց խորին երախտագիտութիւն մը իրեն հօրն ու մօրը :



ՁԿՆՈՐՍԵ ՌԻ ԵՐ ՏՂԱՆ

Տիէթ քաղքին մէջ տարիքը առած համեստ ձկնորս մը՝ Պօղոս անուանով տղայ մը ունէր :

Կրնար հանգստութեամբ ապրիլ, շատ քիչ աշխատելով եւ ինքզինքը

այլկոծեալ ծովու վրայ մրրկայոյզ
 գիշերները յաճախ վտանգի մէջ
 չձգելով. բայց իր տղուն օգտակար
 ըլլալու համար, յօժարութեամբ
 կը կրէր բոլոր այն աշխատութիւն-
 ները եւ բանի տեղ չէր դներ այն
 վտանգները :

Պողոսին մայրը իր տղուն վրայ
 շատ խնամք ու սէր ունէր : Պողոս
 երկու անգամ իր տղայութեան ա-
 տենը շատ վտանգաւոր հիւանդու-
 թենէ բռնուեցաւ, ու հաւաստ-
 եաւ պիտի մեռնէր, թէ որ առանց
 իր մօրը խնամոցը եւ անձնանուի-
 րութեանը մնար : Աւրեմն իր կեան-
 քը քանի մը անգամ անոր պար-
 տական էր : Երբոր բան մը սովրե-
 լու կարող եղաւ, իր ազնիւ ծնող-
 քը անիկա դպրոց խրկեցին : Պողո-
 սը արագընթաց յառաջադիմու-
 թիւններ ըրաւ : Ասուցիչը անոր
 յաջողութեանը վրայ ուրախանա-

լով, յորդորեց իր աշակերտին ծը-
նողքը՝ որ կրցածնուն չափ ալ աւե-
լի յառաջ տանին անոր ուսմունքը:
Անոնք ալ աս բանին հաճեցան, եւ
այս ծախքին կարող ըլլալու համար
իրենց աշխատանքն ու խնայութիւ-
նը աւելցուցին:

Շատ անգամ այս բարի հայրը եւ
այս ազնիւ մայրը իրենց կերակու-
րին համար, կտոր մը հացը եւ բա-
ժակ մը հասարակ գարեջուրը բա-
ւական կը համարէին, որպէս զի
կարող ըլլան վճարել Պողոսին վար-
ժապետներուն վարձքը, եւ իրեն
ուսմանցը պէտք եղած գիրքերը
գնել: Օրհնեց Աստուած այս ազնիւ
ծնողաց ըրած զոհերը, եւ տղուն
բարի վարքը վարձատրեց: Պողոս՝
վարժ միանգամայն եւ քաջ նա-
ւաստի մը եղաւ:

Շատ գեղեցիկ գործքերով նշա-
նաւոր ըլլալէն ետքը, ընդունուե-


ցաւ Տէրու թեան ծովային զինուո-
րու թեան մէջ՝ պաշտօնատարի պա-
տուով, եւ քիչ ժամանակէն բարձր
աստիճանի մը հասաւ :

Այն ատեն իր ծնողացը համար
պարտէզով գեղեցիկ տուն մը վար-
ձեց, եւ փութաց հոգալ այն բո-
լոր բաները, որոնք կրնային նպաստ
մ'ըլլալ իրենց ծերութեան օրե-
րուն երջանկութեանը :

Ծովուն վրայ չեղած ատենը ա-
նոնց հետ կը բնակէր. անձամբ ա-
նոնց կը ծառայէր, եւ բոլոր գի-
շերները անոնց հետ կ'անցունէր :
Միշտ յայտնի կը ցուցնէր անոնց՝
իր սիրոյն չափ ալ մեծարանք. մեծ
հոգ կ'ընէր որ իրեն այցելութեան
եկողները հաւասարապէս իր ծը-
նողքն ալ պատուեն, եւ բնաւ չէր
վայելեր մէկ զուարճութիւն մը՝ ա-
ռանց իր ծնողքը մասնակից ընե-
լու : “ Իմ սիրելի տղաս, կը պօռա-

յին այս յարդելի ծնողքը մենք
քեզի ինչեր պարտական չենք”:

“Գուք ինձի պարտք մը չունիք,
կը պատասխանէր անոնց. իսկ ես
ամեն բան կը պարտաւորիմ ձեզի.
ես ձեզի կը պարտաւորիմ ինչ որ
եմ, ինչ որ ունիմ եւ ինչ որ գի-
տեմ: Բոլոր ձեռքէս եկածը ընելու
ալ ըլլամ, երբէք չպիտի կրնամ
այսպիսի սրբազան պարտքի մը հա-
տուցում ընել”:



ՈՐԻՒՍԿԱՆ ՍԵՐ

Մեր սիրած բոլոր բաներէ ա-
ւելի կը պարտաւորինք մեր հայրն
ու մայրը սիրել, որովհետեւ բնաւ
ուրիշ մէկը չընենք մեզի անանկ ծա-
ռայութիւններ որ անոնց բարեացը
հաւասար գան:

Բոլոր մեր կենաց ընթացքին մէջը
ամենեւին, ոչ երբէք չպիտի գըտ-

նանք անանկ մէկը որ մեզի այնքան
 սիրէ, որքան որ մեր ծնողքը մեզի
 սիրած են: Այն բարեկամները ու
 բոնք ետքը մենք պիտի ընտրենք,
 որքան որ իրենց սէրը անկեղծ ու
 եռանդուն ալ ըլլայ, կրնան մեզի
 երեսի վրայ թողուլ կամ նենգել.
 Հեռաւորութիւնը կամ ընտանեկան
 նոր կապերը, կամ նորէն ստացուած
 բարեկամութիւնները պիտի կրնան
 մեզի մոռցնել տալ անոնց. բայց
 մէկ հայր մը ու մայր մը երբէք չեն
 խաբեր, բնաւ երեսի վրայ չեն թո
 դուր, ամենեւին չեն մոռնար իրենց
 զաւակը:

Մեր սիրած ուրիշ բաներուն
 կորուստը կրնայ երբեմն նորոգուիլ:
 Ասանկ չ'ենք կրնար ըսել մէկ բա
 րի հօր մը ու բարի մօր մը համար:

Երբ անոնք կորանցնելու թշուա
 ռութիւնը կ'ունենանք, չ'ենք կր
 նար անոնց տեղը լեցնել: Նորէն

չպիտի գտնանք երբէք անանկ մէկը
որ մեզի հետ մեր ծնողացը պէս
վարուի:

Ուրեմն սիրենք գորովանօք մեր
ծնողքը: Որքան որ անոնք սիրենք,
այնքան խելացի ու յարգելի ըլլալու
յոյս կ'ունենանք: Այս աէրը, որն որ
Աստուած ինքն մեզի պատուիրեր է,
չատգիւրու թեամբ կը միանայ առա-
քինու թեան սիրոյն հետ, որովհե-
տեւ որչափ որ մեր ծնողքը սիրենք,
այնչափ ալ կը ջանանք անոնք գոհ
ընելու. եւ չենք կրնար անոնք ու-
րիշ կերպով գոհ ընել, բայց միայն
բարի վարքով:

Սիրենք մեր ծնողքը ինչպէս որ են,
ու ինչպէս որ Աստուած անոնք մե-
զի տուեր է. սիրենք, չէ թէ միևանկ
իրենց անձը, այլ իրենց վիճակն ու
աստիճանն ալ: Թէ որ մեր ծնողքը
աղքատ, աննշան եւ թշուառ են,
պէտք չէ որ բարձրանք մէկ աւելի
նշանակաւոր:

Հարուստ, պատուաւոր ու երջանիկ
ընտանիքի մը մէջ ծնած ըլլալու,
ասիկա մէկ ամբարիշտ եւ մեղա-
պարտ զգացում մըն է, եւ նախա-
խնամութեան դէմ հայհոյութիւն
մը: Ընդհակառակն պէտք է անունք
ալ աւելի սիրենք եթէ կարելի է,
որովհետեւ անունք մեզի համար եւ
մեր պատճառաւը շատ մեծ նեղու-
թիւններ ու գրկումներ քաշած են.
ու նաեւ անոր համար ալ պիտի սի-
րենք անունք, որովհետեւ մեր սէրը
ու մեր բարի վարքը կարելի է որ
իրենց վշտացը միակ միտքարու-
թիւն մըն են:

Ուրեմն չը նախանձիւնք այն տղո-
ցը վրայ՝ որոնց ծնողքը մեր ծնող-
քէն աւելի երջանիկ ու հարուստ են,
անանկ ընենք որ եւ ոչ մէկ տղայ
մըն ալ իր ծնողացը մենէ աւելի
երջանկութիւն ու գոհունակու-
թիւն պատճառէ:

Ամառուան իրիկուն մը Միռթիլ
պատանին իր անակէն դուրս ելեր
էր, եւ կը պարտէր լճակի մը քովերը
որուն ջուրերը լուսնին պայծառու
թիւնը կը ցոլացընէին: Այս քաղցր
լուսնովը լուսաւորուած դաշտին
հանդարտութիւնը, իրիկուան գե
ղեցկութիւնը, սոխակին սրտաշարժ
երգերը քիչ մը ժամանակ տղուն
միտքը զուարճալի կերպով մը յա
փրչտակեցին:

Ետքը նորէն եկաւ կանանչ բա
րունակներով զարդարուած կամա
րին տակը, որն որ իր բնակարանին
դրանը շուք կուտար: Հոն տեղ
գտաւ իր ծերունի հայրը, որ դա
լարին վրայ պառկած խաղաղ կը
ննջէր:

Տղան սիրտը ելլելով կանկ կ'առնէ
ու կը նկատէ իր հայրը. դիտելու

ատենը սրտին մէջ բերկրալից զգացում մը կ'իմանար: Աչքը տնկած հաստատ կերպով վրան կը նայէր. միայն երբեմն երկինքը կը նայէր տերեւներուն մէջէն, ու իր աչքերէն սիրոյ եւ ուրախութեան արտասուքներ կը վազէին, ու կ'ըսէր. «Ո՛վ դուն, որ Աստուծոյ ետքը ամենէն շատ կը պատուեմ, ո՛վ իմ հայրս, ո՛րչափ անուշիկ կը հանդիս, արդար մարդուն քունը ի՛նչպէս խաղաղ է: Անտարակոյս, այս իրիկուն, քու աղօթքդ Աստուծոյ մատուցանելու համար տունէն դուրս ելած պիտի ըլլաս, եւ քու աչքերդ կամաց մը գոցուած պիտի ըլլան »:

« Անտարակոյս, ինձի համար ալ աղօթք ըրեր ես, ո՛հ ո՛րքան երջանիկ եմ, Աստուած կը լսէ քու աղօթքդ: Թէ որ մեր դաշտերը առատ հունտերով կը ծածկուին, թէ որ մեր մարդագետիները բազմաթիւ խա-

շինք կը անուցանեն, անոր համար է
որ Աստուած քու առաքինու թեանդ
համար մեզի բողորնիս ալ կ'օրհնէ, » :

“ Երբոր իմին քու ծերու թեանդ
վրայ ունեցած խնամքներէս շար-
ժած, ուրախու թեան արտասուք-
ներ կը թափես, ու աչքերդ երկինքը
վերցուցած Աստուծոյ օրհնու թիւնը
իմ գլխուս վրայ կը կանչես, ո՛հ,
ի՛նչ երջանկու թեամբ սիրտս կը բա-
բախի, » :

“ Ի՛նչպէս կը ժպտիս քունիդ մէջ
տեղը, ո՛հ, անտարակոյս քու միշտ
ըրած բարի գործերէդ մէկուն վրայ
երազ կը տեսնես . . . : Բայց քու հա-
սակաւդ մարդուն կարելի է որ վը-
տանգաւոր ըլլայ ցօղին իջնալուն եւ
գիշերուան զով հովուն փչելուն ա-
տենը բաց տեղ քնանալը, » :

Աս խօսքերը ըսելով, պագաւ ա-
նոր ճակատը, կամաց մը արթընցը-
նելու համար, ու տուն տարաւ որ

իր ծերունի հայրը աւելի հանգիստ
ու անոյշ քուն մը քնանայ :



ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԿԻԻՂ ՀԼՈՒԹԻՒՆ ՈՒ ՀՆԱԶԱՆԳՈՒԹԻՒՆ

Որովհետեւ մեր ծնողքը կը սի-
րենք, պէտք է որ զգուշանանք ա-
նոնց անհաճոյ ըլլալէն եւ նեղու-
թիւն տալէն, այսինքն պէտք է որ
անոնցմէ վախնանք :

Մեր ծնողքէն վախնալն է մեծ
ջանքով ան բաներէն փախչիլ որոնք
կրնան անոնց տեգոհութիւն մը
պատճառել, ու այնպէս կանոնա-
ւորել մեր գործերն ու խօսքերը որ
միշտ անոնց հաճելի ըլլանք :

Սակայն տղուն վախը գերիի վախ
չէ : Գերին կը վախնայ իր տիրոջը
պատիժէն, բայց տղան իր հօրը եւ
մօրը զգալի տեգոհութենէն կը զար-
հուրի :

Ահա՛ այնպէս պիտի վախնանք մեր

ճնողքէն, այս երկիւղը չէ թէ մի-
այն կը միաբանի կատարելապէս սի-
րոյ եւ գորովանաց հետ, հապա ա-
նունցմէ անբաժանելի է. որովհետեւ
ով որ անկեղծաբար կը սիրէ իր ծը-
նողքը, կը դողայ որ անոնք չը տըրտ-
մեցընէ: Թէ որ մեր ճնողքը երբեմն
մեր վրայ չափազանց ներողամտու-
թիւն ունենան, պէտքը չէ որ երես
ելլենք. եւ թէ որ միշտ պատրաստ
են մեր յանցանքները ներելու,
պէտքը չէ որ անունցմէ վախնալէն
դադրինք:

Որովհետեւ այս չափազանց նե-
րողամտութիւնը՝ որ իրենց ամենա-
մեծ բարեսրտութենէն առաջ կու-
գայ, պէտք է ընդհակառակն մեզի
համար նոր գրգիռ մը ըլլայ զգու-
շանալու ան բաներէն, որոնք կըր-
նան անունց նեղու թիւն պատճառել:

Ուրեմն պէտք է միշտ հնազանդ
ըլլայ:

Հօր ու մօր հնազանդ ըլլալը, ա-
նոնց կամացը համեմատ վարուիլն
է, չէ թէ միայն անտրտունը, այլ
եւ փութով եւ սիրով:

Տղան պարտաւոր է ընդունիլ քաղ-
ցըր ու երկիւղած հնազանդ ու-
թեամբ՝ ինչ որ ծնողքը իրեն կու-
տան, այսինքն խրատ, յորդորանք,
ազդարարութիւն, յանդիմանու-
թիւն, կշտամբանք ու պատիժ:

Որովհետեւ ծնողաց իրենց տղուն
վրայ բանեցուցած խստութիւնը ա-
նոր վրայ ունեցած սիրոյն ապացոյցն
է. անոնք զինքը աղէկ ձամբու մէջ
ատաղնորդ ելու պարտաւորութիւնը
ունին, եւ ապկայ իրենց իրաւուն-
քն ու պարտքն է: Այս պարտա-
կանութիւնը՝ անոնց վրայ դրած են
բնութիւնը, կրօնքն ու հայրենիքը.
ուրեմն իրաւացի է որ տղայ մը հը-
նազանդի անխափր անոնց կամացը:
Պէտք է ընդունիլ հեզ ոգւով այն

յանդիմանու թիւնները, պէտքը չէ
երբէք պատասխանել խիստ կերպով,
չեմ ըսեր թէ հպարտու թեամբ
ու յանդգնու թեամբ, որովհետեւ
յայտնի է որ իր հօրը կամ իր մօրը
ինքզինքը ամբարտաւան կամ յան-
դուգն ցուցնող տղան՝ խորին ա-
նարգանաց եւ խիստ պատիժներու
արժանի էակ մըն է :

Ուրեմն պէտքը չէ ուրիշ կերպով
պատասխանել այն յանդիմանու
թիւններուն, բայց եթէ ա՛յլ անոնց
վերադին արժանի չ'ըլլարու անկեղծ
խոստմունքով մը :

Այս մասին պէտք է միտքը դնել
հաստատ առաջադրու թիւն մը, եւ
ջանալ զայն պահել : Գէշու թեանե
վրայօք խօսած ատենը՝ «Ա՛յ անի-
կայ չպիտի գործեմ», ըսելը բաւա-
կան չէ, պէտք է անգամ մ'ալ ան
բանը չգործել : Ծնողք երբեմն կը
հարկադրուին տղաքնին պատժելու :

եւ այն ալ միշտ անոր աղէկու թեանը
համար, որ իր վրայ զգացած սե-
րերնուն ազդեցութիւնն է: Թէ որ
ամեն կարելի եղած հնարքը չգոր-
ծածեն անոր պակսութիւններն
ուղղելու համար, ըսելէ թէ պէտք
եղածին չափ չեն սիրեր զինքը:

Ան տղան՝ որ իր ծնողքէն պա-
տիժ կ'ընդունի, պէտքը չէ որ պա-
տիժէն փախուստ ապու ջանայ,
պէտքը չէ նաեւ որ մտքէն անգամ
անցնի աս պատճառաւ իրեն ծնո-
ղացը դէմ բարկանալ մը. ու անոնց
սիրոյն վրայ կասկածներ ունենա-
լուն տեղը, այն պատիժը իրենց սի-
րոյն մէկ նոր ապացոյց մը համարե-
լու է, հնազանդութեամբ ընդու-
նելու եւ ալ պատժոյ արժանի չըլ-
լալու հաստատ առաջադրութեամբ:

Տղան պէտք է որ տրտմի քաշած
պատժոյն վրայօք. բայց չէ թէ իր
զրկումէն կամ պատիժէն քաշած

ցաւին պատճառաւ, հասպա պէտք է տրտմիլ իր ծնողացը պատճառած տժգոհութեանը եւ վշտին համար, որ կ'զգան զինքը պատժելու բռնադատուած ատենին :

Ամեն կերպով տղայ մը ջանալու է այս վիշտէն անտնք խնայելու. եւ երբ որ դժբաղդաբար չյաջողի, եւ իրեն աղէկութեանը համար զինքը պատժելու դառն պաշտօնը յանձն առած ըլլան, պէտք է որ անոնց շնորհակալ ըլլայ իբր թէ նոր բարերարութեան մը համար :

Տղայ մը որ իր ծնողքէն կը վախնայ եւ անոնց կը հնազանդի, միշտ անոնց հըլու է. այսինքն՝ կ'ընէ ինչ որ ծնողքը իրեն կը հրամայեն, եւ անոնց արգելած բաներէն հեռու կը կենայ :

Ճշդիւ հնազանդելը բաւական չէ, հասպա պէտք է ինքնայօժար հնազանդիլ, այսինքն պէտքը չէ ակամայ հնազանդիլ ծնողաց պատուէրնե-

րուն, հապա պէտք է անոնք բարի,
արդար եւ իմաստուն ճանչնալ, եւ
հաճութեամբ անոնց հետեւիլ: Ա-
րովհետեւ մեր ծնողքը, հրաման-
ներ ու արդելմունքներ ըրած ժա-
մանակնին, միշտ մեզի համար ու-
նեցած սէրէն ու մեր ճշմարիտ օգու-
տէն դրդեալ կ'ընեն: Եւ որովհե-
տեւ մեր ծնողացը հնազանդելը մե-
զի գոհունակութեան պատճառ
պէտք է ըլլալ, զայն յայտնելու ենք
արագութեամբ, սիրով անոնց հրա-
մանը կատարելով:

Տղայ մը որ կամաց կամաց կը կա-
տարէ իրեն տրուած պատուէրնե-
րը, ու անոնք երկու երեք անգամ
կրկնել կու տայ, եւ իրեն հրամայ-
ուածները կատարելու ատենը տհա-
ճութիւն մը կը ցուցընէ, շատ ան-
հաճոյ էակ մըն է. կրնայ մարդ նա-
եւ կասկածիլ անանկ տղուն աղէկ
սիրտ ունենալուն վրայ:

Հնազանդութիւնը պէտք է կատարեալ ըլլայ, այսինքն Հնազանդիկի ծնողացը թեթեւ բաներու մէջ ալ, կարեւոր բաներու մէջ ալ:

Վասն դի, ճիշդ խօսելու համար, չկայ բնաւ թեթեւ անհնազանդութիւն մը: Անհնազանդութիւնը ըստինքեան այնչափ մեծ յանցանք մըն է, որ եթէ դիտմամբ եղած է, միշտ պատժոյ արժանի է, թեւ պատճառը շատ կարեւոր չ'ըլլայ. ներելի այն ժամանակը միայն կրնայ ըլլայ, երբ որ մոռնալէ կամ անուշադրութենէ առաջ եկած ըլլայ: Բայց արդէն իսկ ուշադիր չ'ըլլալն ու մոռնալը մեծ յանցանք մըն է. եւ շատ արու եմք որ ինքզինքնիստ աս բաներէն աղատ պահենք:

Վասն դի անհնազանդութիւնը մէկ տղու մը համար շատ աղետալի հետեւանքներ կրնայ ունենալ: Տղայ մը չկրնար բանի մը վրայով դատաւար

տան ընել, չգիտէ աղէկն ու գէշը,
օգտակարն ու վնասակարը. չկրնար
նախատեսել իր գործքերուն հետեւ
ւանքները: Իր ծնողքը, ընդհակա
ռակն խոհեմութիւն ու խելք ու
նին, գիտեն ինչ որ կրնայ իրեն օգ
տակար կամ վնասակար ըլլալ, թէ
նոյն վայրկենին եւ թէ ետքը: Անոր
ըրածէն առաջ գալիք աղէկ կամ
գէշ հետեւանքները կը ճանչնան:

Ուրեմն անոնք պիտի ուղղեն միշտ
զինքը, ինքն ալ անխտիր եւ առանց
մեկնութիւն հարցընելու՝ անոնց
հրամանին պիտի հնազանդի: Անոնք
պարտաւորութիւն չ'ունին իրեն
մեկնութիւն տալու, մանաւանդ որ
ինքն ալ կարելի է թէ ան մեկնու
թիւնը չհասկընայ:


Ամեն անգամ որ ծնողք բան մը
կը հրամայեն կամ կ'արգիլեն իրենց
տղուն, անոր աղէկութեանը հա
մար է:

Պէտք է համոզուի թէ այն բանը որ իրեն կ'արգիլեն, միշտ գէշ է, թէ եւ չգիտնայ թէ ինչո՞ւ գէշ է. ու պէտք է անկէց հրաժարիլ կրօնական փոյթով մը: Ան անանկ տղաք, որ առանց իրենց տրուած պատուէրներուն ճշդիւ անհնազանդ գտնուելու, խորամանկութիւններ կը հնարեն անտնցմէ ազատ ըլլալու համար:

Ասոր կ'ըսեն խուսափիլ մէկ պատուէրէ մը կամ արգելմունքէ մը: Աղէկ զգուշանանք այս անարժան խորամանկութիւններէն: Ասոնք տղու մը կրնան սովրեցընել խաբեբայութիւն ու կեղծաւորութիւն, որոնք ատելի մտութիւններ են:

Հնազանդինք միշտ անկեղծութեամբ, կատարելապէս եւ ուրախութեամբ: Ասանկով մեր խիղճը միշտ հանդարտ կ'ըլլայ, կ'ազատինք այն անհամար թշուառութիւններ

րէն որոնք անշուշտ անհնազանդու
Թիւնք իր հետը կը բերէ :



ԱՆՀՆԱԶԱՆԴ ՏՂԱՅ

Էմիլիոս՝ մէկ որբեւայրի կնոջ մը
տղան էր. այս կինը կը բնակէր
գարբնոցի մը մօտերը. տանը պա-
տուհանները կը նայէին գետի մը վը-
րայ, սակայն գետէն բաւական հե-
ռու էր տունը :

Այս տեղը գետին բոլոր լայնու-
թեանը վրայ մէկ ջրարգել մը կար,
որ գետին ջուրերուն մէկ մասը դէպ
'ի դաշտերը կը դարձընէր, ուր որ
լատ պիտոյից ջուրերը սահանք կ'ըլ-
լային եւ կը բաժնուէին առուակ-
ներու կամ նորէն վար կ'իյնային
կարկաչասահ : Այս ջրանոցքի նման
տեղին բուն իսկ բերանը, գետը
մէկ թումբով մը նեղցած, կը դար-
ձընէր գարբնոցին մեծ անիւր :

Այս անիւր եօթը մէթրօ տրա-
մագծի վրայ երեք մէթր լայնու-
թեամբ թիաձեւ թեւերով էր, որ
տակէն ջուրը կ'առնէր, եւ ջուրին
ընթացքին ուժովը կը դառնար :

Անիւր հաստը փայտ մը կը դար-
ձընէր որն որ դարբնոցին շէնքին
ներսի կողմը մտած էր, եւ հոն դառ-
նալով վեր կը վերցընէր ու վար կը
ձգէր մէկ մեծ ուռն մը, (որ երկու
կամ երեք հարիւր քիլոկրամնոց եր-
կաթի կտոր մըն էր), եւ գործաւոր-
ները կատակի համար վայրի ծի-
ծառն կամ Մառթինէ կ'անուա-
նէին զայն :

Դիւրաւ կը հասկըցուի որ աս տե-
ղը գետին հոսանքը շատ արագըն-
թաց էր, ու քանի որ անիւին կը
մօտենար այնքան կը սաստկանար :

Արդարեւ, ջուրը անիւին ու
թումքին վրայ ահագին առատա-
թեամբ ու մեծ շատաչիւնով մը կը

գահավիժէր, եւ հեռուն կը թըռ-
ցունէր փրփուրի յորձանքները:

Այս ջրանցքին մօտն էր Կսիլիոսի
բնակած տունը: Կսիլիոս մեծ պա-
կանու թիւն մ'ունէր որ հնազանդ
տղայ չէր:

Կը սիրէր գորովանօք իր մայրը,
ու անոր քովն եղած ժամանակը
բնաւ տժգոհութեան առիթ չէր
տար, բայց մօրմէն բաւական չէր
վախնար, եւ երբ որ անոր աչքէն կը
հեռանար, բնաւ չէր զգուշանար որ
յանդիմանութիւն լսելու բան չ'ընէ:

Ուստի բնաւ դասարանը չէր աչ-
խատեր, ու տանու մէկ տարու ան
եղած էր, առանց ուրիշ բան մը գիտ-
նարու, բայց միայն մէկ քանի գի-
րեր իրարու քով բերել ու կապել:

Դասի ատենէն դուրս, կ'երթար
կը գտնէր անխելք զեղիս տղայ, ու
բոնց հետ տեանու ելը մայրը արգի-
ւեր էր իրեն:

Ձինքը առ գէշ բանէն ետ կեցը-
նելու համար, այս բարի մայրը ին-
քըզինքը դժուար պաշտօնի մը տակ
դրաւ, ամեն օր մինչեւ դպրոցին
դուռը կը տանէր, եւ դասը լմնցու-
ցած ատենը անձամբ կ'երթար անի-
կայ տունելու:

Հինգշաբթի օրը, մայրը իրաւ միտ-
քը դրեր էր անիկա տունը պահե-
լու, բայց Էմիլիոս կուլար, կը տա-
ռատայէր, եւ կը խոստանար շնորհքով
վարուելու թէ որ մայրը թող տար
որ դուրս ելլէ:

Մայրը հրաման տուաւ որ հինգ-
շաբթի օրը երթայ ու մինակ դբօս-
նու, բայց այն պայմանաւ որ չպի-
տի մերձենար ջրանոցքին, եւ չպի-
տի դպչէր մէկ պզտիկ նաւակի մը
որ ծովեզերքը կապուած էր:

Էմիլիոս մօրը խոստացաւ ըսածին
պէս վարուիլ ու անկէ ետեւ երկու
հինգշաբթի հնադանդեցաւ, եւ զբօ-

սանք ըրաւ պարկեշտ եւ կրթեալ
տղոց հետ, եւ գետին շնտեցաւ :

Բայց երրորդ հինգշաբթին (այն
օրը որ մայրը դուրս ելած էր ան-
հրաժեշտ գործի մը համար) մտա-
ծեց թէ կրնայ երթալ, զբօսնուլ
ջուրին եզերքը առանց իր մօրը գի-
տու թեանը :

Սակայն մայրը իր գործքերը լմն-
ցրնելէն ետքը տուն կը մտնէ, գա-
լուն պէս առաջին գործը կ'ըլլայ
դէպ 'ի գետը նայիլ, վասն զի գիտ-
նալով իր տղուն անհնազանդու-
թեան հակամիտու թիւնը, միշտ մէկ
անհանգստու թեամբ մը սիրտը կը
տագնապէր : Ար տեսնէ տղայ մը նա-
ւակի մը մէջ որ կը ջանար գետէն մի-
նակ անցնելու :

“ Արո՞նք են, ըսաւ, արդեօք այն
ծնողքը որ թոյլ տուեր են տղու մը
ասանկ մէկ շատ վտանգաւոր զտա-
ծու թեան մը հետեւելու ” :

Բայց ի՞նչ եղաւ կինը երբոր կէս
մը ճանչցաւ որ այն իր Էմիլիոսն է,
ան Էմիլիոսը՝ որուն ապսպրեր էր
բնաւ ջրին քով չմտենալ, ան Էմի-
լիոսը՝ որ բոլոր իր կենացը մէջ թի-
չէր քաշած:

Իսկ եւ իսկ ինքն էր այն թշուա-
ռականը: Քակեր էր ան շղթան որ
նաւակը ծովուն եզերքը հաստա-
տուն կը բռնէր. վերջը վտանգը չը
զիտնալով եւ կարծելով որ դիւրու-
թեամբ նաւակը պիտի վարէ, ինքը
զինքը ջուրին հոսանքին յանձնած
բարձր ձայնով կ'երգէր, չտեսնալով
այն անդունդը որ զինքը պիտի կը-
լէր, չը լսելով նաեւ անիւին թըն-
դիւնը ու ալիքներուն շառաչիւնը
որ կը զարնուէին թումբին վրայ:

Աս տեսնալով մայրը՝ կը վազէ եւ
աղաղակ մը կ'արձակէ:

Աս աղաղակը անանկ ահագին ե-
ղաւ, որ մութերուն բաղխումը չ'ար-

գիլեցին դարբնոցին գործաւորները
զայն լսելու, շտապաւ իրենց գոր-
ծարանէն դուրս նետուեցան: Բայց
ի՛նչ օգնու թիւն կրնային ընել ան-
հնազանդ տղուն: Հոսանքը արդէն
զայն արագու թեամբ կը տանէր դէպ
ի անիւր:

Սակայն ինքը միշտ կ'երգէր, կա-
մաց կամաց այն աղետալի տեղին
մօտենալով. բայց երբ լսեց իր մօրը
աղաղակները երբ տեսաւ բոլոր գոր-
ծաւորները զարհուրած, որ հազիւ
կրնային արգիլել խեղճ կնկանը իր
տղուն քով նետուիլը, իմացաւ ի-
րեն սպառնացող վտանգը, սակու-
մով նայեցաւ ահռելի անիւին, տա-
րածեց իր բազուկները, դրկեց մօ-
րը իր վերջին համբոյրը, ձեռքերը
կուրծքը՝ ծունկի վրայ եկաւ, եւ
իր հոգին յանձնեց Աստուծոյ: Ա-
սանկ իր անհնազանդու թեանը գոհ-
եղաւ Էմիլիոս:

ՈՒՍՄԱՆ ՅՕՖԱՐՈՒԹԻԻՆ , ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ԴՊՐՈՅԻ ՄԷՁ ՎԱՐՔ

Մեր ծնողացն համար ունեցած
հնազանդութիւնն իսկ քարտաւո-
րէ զմեզ եռանդով աշխատիլ ու ատլ-
րիլ :

Մեր ծնողքը մեզի դպրոց կը խոր-
կեն, երբոր մենք կրթութիւն մը
ընդունելու կարող կ'ըլլանք . աս մեր
աղէկութեանը համար է, որովհե-
տեւ պատանի մը մեր օրերը առանց
կրթութեան՝ չկրնար յաջողակ ը-
լալ եւ ոչ մէկ բանի մը :

Մինակ կրթութիւնը կրնայ մեզի
մեր բոլոր պարտաւորութիւնները
կատարել ու մեր գործքերը աղէկ
մը վարել ապա . կրթութիւնը ձանձ-
րութեան դէմ ապահով հնարք մը
կը պատրաստէ, կրթութիւնը մե-
զի կը ձարէ օգտակար ու հաճոյա-
կան կերպով մեր պարտաւոր առեւնները
լեցընելու միջոցը, եւ մեզի կը պահ-

պանէ ապագային համար այն գէշ
սովորութիւններէն, որոնց մէջ պի-
տի կրնար մեզի ձգել տօնի օրերուն
դատարկութիւնը: Արթուրութիւնը
այս օրուան օրս գրեթէ անանկ հար-
կաւոր է մարդուս, ինչպէս որ զինքը
անուցանող կերակուրները ու իր
չնչած օդը:

Մեզի այն բարիքները վայելել
տալու համար է, որ մեր ծնողքը
մեզի դպրոց կը խրկեն:

Պէտք է որ սրտանց ուզելով ու
սիրով դպրոց երթանք, որովհե-
տեւ կրթութեան օգուտները հաս-
կընալու դեռ կարող չ'եղող տղան
ալ գիտէ թէ պարտաւոր է իր ծնո-
ղացը կամքը կատարելու: Ասիկայ
բաւական պիտի ըլլայ դպրոցը սի-
րել տալու իրեն:

Ի՞նչ պէտք է որ ընէ տղայ մը թէ
որ կ'ուզէ դպրոցին մէջ իր ծնողաց
գիտաւորութեանը յարմար վայր-

ուիլ = Ահաւասիկ. “Տղան ամեն կարճ
ճամբայէն դպրոց երթալու է առանց
ետ դառնալու, առանց ճամբան ըզ-
բօանելու: Աէտք է որ հոն հասնի
սահմանուած ժամէն քիչ մը առաջ.
իր անձը եւ իր զգեստները պէտք
է որ բոլորովին մաքուր ըլլան: Դա-
սարանը պիտի մտնէ համեստ ու
հանդարտ կերպով առանց վագե-
լու, առանց արտօրալու պիտի եր-
թայ իր տեղը նստի իր ընկերներէն
մէկը չ'չփոթելու պայմանաւ: Դա-
սին ժամանակը միայն իր ուսմանը
պիտի զբաղի, եւ ուրիշ բանի մը
վրայ չպիտի մտածէ: Մտադրու-
թեամբ պիտի լսէ ուսուցչին ըսածը,
եւ պիտի ջանայ անկէց իրեն օգուտ
քաղելու: Իրեն վրայ դրուած պարտ-
քը յօժարու թեամբ պիտի կատարէ
եւ իր դասերը ախորժակով ու ե-
ռանդով պիտի սովորի:

Զպիտի խնդայ, չպիտի խօսի իր ըն-

կերներուն հետ, շախտի համարձա-
 կի մէկուն հետ խաղաբառ ու խեղ-
 կատակելու: Ասուցիչը իրեն նայի
 չը նայի՝ միշտ հանդարտ պիտի կենայ:

Երբոր դասը լմնայ, իր ծնողացը
 առևնը պիտի դառնայ առանց խո-
 տորելու ան ձամբէն, ուսկից իրեն
 հրամայուած է երթալ դալ:

Իրաւ՝ առէկ աշակերտը համեա
 կ'ըլլայ, բայց մէկ պարկեշտ հա-
 մարձակութիւն մըն ալ կ'ունենայ.
 Թէ որ բան մը հասկընայ, խօսելու
 հրաման կ'ուզէ, եւ երբոր այս հը-
 րամանը անոր արուի, կ'աղաչէ դա-
 ասասուին իրեն հասկցած բանը բա-
 ցարել:

Ոչ հպարտութիւն կունեննայ եւ
 ոչ անապարժութիւն, վասն զի զի-
 տէ որ անոնք ասելի մտութիւններ
 են, չծիծաղիր երբէք այն աշակերտ-
 ներուն վրայ որ իրմէն քիչ յաջո-
 զակ են, ու միտքէն չ'անցըններ ա-

անոցմէ վեր ըլլալը, շիտաիր երբէք
իր ստացած յաջողակու թիւններուն
վրայօք: Նախանձաւորու թիւն ու
նի, եւ կ'ուզէ ուրիշներուն նման
եւ անոցմէ ալ աղէկ ընել, բայց
նախանձ չէ. երբոր կը տեսնէ որ իր
ընկերները զինքը կ'անցնին, նախան-
ձու թիւն մը չզգար, հասցա եռանդն
ու քաջու թիւնը կ'աւելցընէ, որ ա-
նոց հաւասարելու կարող ըլլայ,
կամ նաեւ անոնք անցնի:

Բոլորովին բարեալ է իր ամեն
ընկերներուն հետ, եւ պատուաւոր
ու ներելի եղած բաներուն մէջ ա-
նոց զուարճու թիւն մը պատճառե-
լու պատեհ ժամանակը ձեռքէն չը
փախցընէր: Չիտաիր երբէք դասէն
ետքը իր ընկերներուն գործած յան-
ցանքներուն եւ անոց դպրոցին մէջ
կրած յանդիմանու թիւններուն եւ
պատիժներուն վրայով:

Չիտաիր բնաւ դասին ժամանակը

այն բաներուն վրայօք որ ընկերները
դպրոցէն դուրսը ըրած են. անոնց
համար բնաւ գէշ չխօսիր. ամենեւ
ւին անոնց դէմ քսու թիւն չ'ըներ ։
Բոլոր վէճերէն ու ծեծկուելէն կը
փախչի. միայն թէ երբոր տեսնէ
տկար մը զօրաւորէ մը չարչարուած,
ան ատեն տկարը պաշտպանելու հա-
մար իր ուժը կը գործածէ ։ Ամենուն
հետ բարեկամութեամբ կը խօսի
պէտք եղած ժամանակը, բայց մաս-
նաւոր սէր մը մի միայն խելացիներ
րուն հետ կը կապէ ։

Մեծ ջանքով կը փախչի չէ թէ մի-
այն գէշերուն՝ այլ եւ անխելքնե-
րուն ընկերութենէն, վասն զի
անմտադրութիւնն ու անզգամու-
թիւնը կրնան առաջնորդել անհը-
նազանդութեան ու անկէ առաջ
եկած բոլոր մոլութիւններուն ։


Ամենուն բարի օրինակ կ'ըլլայ,
եւ մանաւանդ իր բարեկամներուն,

անոնց հետ անանկ բաներ կը խօսի
եւ անանկ բաներ կ'ընէ որ կարե-
ւան պատմուիլ անոնց եւ իրեն ծը-
նողացը առջին ։

Կը մեծարէ եւ կը սիրէ իր ուսու-
ցիչը, կ'ընդունի հեղ սրտով անոր
հրամաններն ու խրատները, անոր
խնամքներուն երախտագէտ է ։

Երբէք չտրտնջար անոր խիստ կեր-
պով վարուելուն համար, բնաւ չը
կասկածիր անոր անաչառութեանը
ու արդարութեանը վրայ, ու թէ
որ լսէ թէ ուսուցչին համար թըշ-
նամութեամբ կը խօսին, զաւկի ջան-
քով ու բարեկամի եռանդով անիկա
կը պաշտպանէ ։ ։

Այսպէս վարուելով տղան օգուտ
կը քաղէ իր ուսուցչին դասերէն,
ու իր ծնողացը փառքը եւ ուրա-
խութիւնը կ'ըլլայ ։



Վ Ա Լ Ա Ն Թ Ի Ն

Անհնար է առանց օգուտ քաղելու կարդալ այն երիտասարդ հովիւին պատմութիւնը, որ իր ուսման վրայ ունեցած սիրոյն զօրութեամբը շատ իմաստուն եղաւ :

Վալանթին Ժամուէյ—Տիւալ Շամբանիայի գեղէն աղքատ մէկ գործաւորի մը տղան էր, եւ իրեն տասներկու տարուան հասակին մէջ իր հայրը կորսնցրնելու թշուառութիւնը ունեցաւ :

Իր մայրը, թէպէտեւ չափազանց աղքատութեան մէջ էր, բայց անկա դպրոց խրկեց, ու ան ատենէն տղան ուսման համը առաւ : Բայց գիւղին մէջ ան ատեն դպրոցը միայն ձմեռուան երեք ամիսը բաց կը կենար : Վալանթին այս երեք ամիսը իր մօրը տունը կ'անցընէր. եւ անոգաոգաոք իր դասին կը հետեւէր,

տարիին միւս բոլոր մնացած մասը
 երկրագործի մը քով կը կենար, որուն
 խաշինքը դաշտերը կը տանէր, կ'ա-
 բաժէր:

Վարանժէն իմաստուն միանգա-
 մայն եւ փութաջան աշակերտ մըն
 էր, եւ գարնան գեղեցիկ եղանա-
 կին մէջ իր գիրքերուն հետ կ'զբա-
 ղէր ուրբան որ իրեն կարելի կ'ըլլար,
 որպէս զի չմտնայ ձմեռուան երեք
 ամիսը սովորածները: Տասն եւ չորս
 տարուան եղած աստեղը, կատարե-
 լապէս կտրուող գիտէր, բաւական
 գրել, ու թուանշանները կը ձանչ-
 նար, նստեւ ասէկ գիտէր քրիստո-
 նէական վարդապետութիւնը: Ան
 աստեղը պարտաւորեցաւ ձգել իր
 գեղը, ուր թշուառութիւնը չա-
 փաղանցէր, եւ ուր իրեն անկարելի
 էր իր ասպտաւոր ձարել: Եստ լա-
 ցաւ իր խեղճ մայրը ձգելու աստեղը,
 ու միտքը դրաւ որ տեղ մը գտնա-

լուն պէս իր վաստրկածին մեծ մա-
սը անոր խրկէ, եւ ետքը միշտ կա-
տարեց այս խարհածը եռանդով ու
ճշդիւ :

Ինչպ'ի Ղուենի կողմը ճանապար-
հորդեց :

Այս ճամբորդու թիւնը ձմեռուան
մէջ էր, 1709 թուականին : Աս ձմե-
ռը չափէն աւելի սաստիկ եղաւ :
Երիտասարդ ուղեւորը քանի մը օր
ճամբայ ընելէն ետքը, շիրցաւ դի-
մանալ ցուրտին որ զինքը կ'ընկճէր,
ու թշուառութիւնը կատարեալ
ըլլալու համար ծաղիկ հիւանդու-
թենէն ալ բռնուեցաւ : Քաշած
նեղութիւնները անտանելի էին, եւ
մոլորած էր ձիւներուն մէջ տեղը
անանկ մէկ գաւառի մը մէջ, ուր
թշուառութիւնը կը ցամքեցնէր բո-
լոր ողորմածութեան աղբիւրները :
Շնչապառ՝ ձիւներուն վրայ իյնա-
լու աստիճանին հասաւ, բայց յիշեց

իր մայրը, որուն մէկ հասիկ յոյսն էր, Աստուծոյ ողորմութիւնը օգնութեան կանչեց ու իրեն վրայ նոր քաջալերութիւն մը եկաւ :

Կրցածին չափ գրեթէ գետինը քսուելով մինչեւ ագարակ մը ինկաւ :

Ագարակին վարձաւորը կարեկցութեամբ սիրտը շարժելով շուտով զինքը դէպ 'ի գոմը տարաւ : Հոն անոր զգեստները հանեց, պատեց անիկա հին կտաւներով եւ վարակի կակուղ յարդով, ու մինչեւ բազուկները ոչխարներուն աղբին մէջը թաղեց տղան, որ տաք մնայ, եւ ծաղկին դուրս տարուն դիւրութիւն մ'ըլլայ. ետքը խաչակնքեց վրան եւ թողուց ըսելով. « Աստուած ողորմի քեզի խեղճ տղայ, որովհետեւ միակ ինքը կրնայ քեզի օգնել », :

Վալանթին արդարեւ ինքզինքը Աստուծոյ յանձնեց, Աստուած ալ

զինքը երեսի վրայ չձգեց: Աշխարհ
ներուն շունչը ու աղբին տաքու
թիւնը կամաց կամաց անոր բժշկը
ուերուն նպաստ եղաւ: Աղորմած
վարձակալը, թէպէտ շատ չքաւոր
էր, բայց օրը երկու անգամ ջուրի
մէջ եփած եւ միայն քիչմը աղով
համեմուած գարիի ալիւր կը բերէր
անոր: Վարձաւորին չքաւորու
թիւնը միայն այսչափին կը ներէր
որ տղին ընէ: Սակայն ձմեռը եր
թալով կը սաստկանար: Գոմին շրը
ջապատը ընկուզենիներով եւ կաղ
նիներով լեցուն էր: Քիչերը շատ
անգամ տղան կ'արթննար որտեման
կամ թնդանօթի պէս յանկարծա
կան ու սաստիկ ձայներէն: Այն
ծառերէն մէկ քանիները սառնա
մանեաց սաստկութեամբը կը խոր
տակուէին ու մինչեւ արմատներնին
կը ձեղքուէին:

Երբոր վարանթէն սկրտեց քիչ

մը աղէկնալ, վարձակալը անոր մէկ
քանի հացի կտոր բերաւ, որոնք սա-
ռոյցը այնպէս կարծրացուցեր էր որ
հարկ կըլլար անոնք կացինով կտա-
րել: Վիճակին քահանան ձեռք
բռնեց, բարի վարձակալին հիւան-
դութենէ նոր ելլող տղին օգնելու
համար. եւ Վալանթէն իր առող-
ջութիւնն ու ուժը նորէն ստանա-
լով, գնաց մէկ գործ մը փնտռելու,
եւ յանձնառու եղաւ երկրագործի
մը քով հովուութիւն ընել, ու կըր-
ցածին չափ շարունակեց կարդալը
որ սովորածը բնաւ չմոռնայ:

Աստուածային նախախնամութիւ-
նը վերջապէս անիկա անտառներուն
մէջ տեղը՝ մէկ առանձին տուն մը
առաջնորդեց Վիւնէվիլէն քիչ հե-
ռու: Այս տունը կը բնակէին չորս
բարեպաշտ մարդիկ, որոնք բոլորո-
վին աշխարհէս քաջաւած էին, եւ
կապրէին մէկ պղտիկ կալուածի մը

բերքովը, որն որ իրենց ձեռքովը կը
մշակէին: Իրենց պէտք էր տղայ մը՝
կովերնին պահպանելու համար: Վա-
լանթէն ներկայացաւ անոնց, անոնք
ալ զինքը բարեսրտութեամբ տու-
ներնին ընդունեցին, եւ անոր խոս-
տացան որ իր մօրը խրկեն վաստա-
կին մեծագոյն մասը:

Այն օրէն ետքը Վալանթէն հան-
գիտ էր իր աղէկ վիճակին համար,
եւ իր մօրը օգտակար ըլլալուն հա-
մար ալ երջանիկ էր: Ա՛լ Վալան-
թէն ուրիշ բան չմտածեց բայց ե-
թէ աղէկ կատարել իրեն տէրե-
րուն համար ունեցած պարտքերը,
եւ ուսման գործածել բոլոր իր պա-
րապ ժամանակները: Աւելի աղէկ
գրել սովրելու համար, միտքը դրաւ
իր պատուհանէն հանել ապակիի
կտոր մը, եւ անիկա իր օրինակին
վրայ դնելով՝ կը գրէր վրան անոր
մէջէն տեսնուած գիծերը:

Տանը մէջը համառօտ թուարա-
նութիւն մը գտաւ, մինակ ու ա-
ռանց դասատուի չորս գործողու-
թիւնները սովբեցաւ, եւ ասիկա
եղաւ իրեն համար զբօսանաց ու
զուարճութեանց ազբիւր մը:

Իր տէրերը մէկ քանի աղէկ գրքեր
նէին եւ տեսներով տղին ուսման
ախորժակը, անոր փոխ տուին:

Անտառներուն մէջ իր կովերուն
հետ քայլ մը շէր առնելի առանց
գիրք մը հետը ունենալու: Եկեղեց-
ւոյն քահանան, ուր որ կ'երթար
կիրակի օրերը պատարագ լսելու,
աչխարհագրութեան գիրք մը տը-
ւաւ անոր, այս ուսմունքին այն աս-
տիճան սէր ձգեց, որ քիչ ատենէն
ձանչցաւ երկրի բոլոր գաւառները՝
գրեթէ անտառին զանազան ան-
կիւններէն աւելի աղէկ: Իր կա-
զանդ շէքներովը ծախու առած պըզ-
տիկ ակթլասին մէջ երկնագունտի

աշխարհացոյց մը կար, որուն վրայ
նշանակուած էին երկնից զանազան
աստղերը իրենց անուամբն ու մե-
ծութեամբը: Այս աշխարհացոյցիս
օգնութեամբը, վալանիթէն ուզեց
սովբիլ բոլոր համաստեղութիւն-
ները: Խիստ բարձր կաղնիի մը գա-
գաթը ուռիի ոստերէ ու իրարու
մէջ անցած բաղեղներէ բաղկացած
հիւսուածք մը շինեց: Գիշերը եր-
բոր երկինքը պարզ կ'ըլլար, այս տե-
սակ մը բոյնին մէջը կը նստէր ու
զանազան աստղերը կը նկատէր: Իր
ուսման համար ունեցած սէրը յա-
ջողութեամբ պսակեալ, միշտ կ'ա-
ւելնար:

Օր մը երբոր ծառի մը տակ նստեր
էր, գիւղքերով ու աշխարհագրական
ցուցակներով շրջապատուած եւ
ուսման մէջ ընկղմած՝ չտեսաւ այն
երկու օտարականները, որ իրեն
քով մօտեցեր էին եւ զինքը կը նը-

կատէին հիացմամբ : Ասոնցմէ մէկը
շատ երիտասարդ էր, միւսը չափաւ որ
հասակով. առաջինը Նոռէնի ժա-
ռանգորդ արքայորդին էր. որ ետքը
Գերմանիայի կայսր եղաւ Զրանչիա-
կոս առաջին անուանով. միւսն ալ
անոր դաստիարակը :

Ասանկ փոքրիկ հովիւ մը այսպէս
դբաղած տեսներով դարմացած “Ի՞նչ
կ'ընես հոս, տղեկ”, ըսին անոր :

— “Կուսանիմ”, պատասխանեց
Վալանթէն համեստ կերպով մը :

— “Ի՞նչ. այս գիրքերէն բան մը կը
հասկընամ” : — “Կը ջանամ հասկնալ”,
պատասխանեց փոքրիկ հովիւը, մե-
ծարանքով ոտքի վրայ ելլելով նոյն
միջոցին :

Ան ատենը երիտասարդ արքայոր-
դին ու իր դաստիարակը անոր շատ
հարցմունքներ ըրին աշխարհագ-
րութեան, պատմութեան ու թը-
ջւարանութեան վրայ, ու սքանչա-


ցան անոր պատասխաններուն: Իր տէրերէն անոր վրայօք տեղեկութիւն առին, որոնք պատասխանեցին թէ “Ո՛րչափ որ ուսումնասէր է, այնչափ ալ ազնուաբարոյ ու խելացի է”:

Պալատը դարձածին պէս արքայորդին պատմեց իր հօրը՝ անտաններուն մէջը գտած փոքրիկ հովիւը, որ մինակ իր ջանքովը դարմանալի կրթութիւն մը ստացած էր:

Հրաման խնդրեց այս տղին խնամք տանիլ ու խնայն իր խնդիրքը կատարուեցաւ: Վալանթէն իր բարերարին միջնորդութեամբը Բօնդ — ա — Մուսօն ձեմարանը դրուելով՝ արագընթաց յառաջադիմութիւններ ըրաւ ամեն տեսակ ուսման մէջ, երեւելի եղաւ իր գիտութեամբը: Աբբայորդին որ ետքը կայսր եղաւ, անիկայ իրեն գրապետը անուանեց: Զօրաւոր եւ հարուստ եղած ժա

մանակն ալ ժամուէյ—Տիւ վալ միշտ
պարզ, եւ համեատ կանոնաւ որ վար-
քի տէր եղաւ, ինչպէս որ էր կո-
վերը անտառներուն մէջ պահպա-
նած ատենը: Ուսմունքէ ու բարե-
րարութենէ զատ ուրիշ զուարճու-
թիւն չճանչցաւ:

Նորէն շինել տուաւ իր ծնողացը
տունը եւ իր մօրը երջանիկ բարե-
կեցութիւն մը վայելել տուաւ. ու
երբոր մայրը մեռաւ, այն տունը
գեղին ընծայ ըրաւ, որպէս զի այն
տեղի դաստիարակը բնակի ու հոն
դպրոց հաստատուի:



ԾՆՈՂԱՅ ՎՐԱՅ ՊԱՐՏԻ ԵՂԱԾ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Մինակ կատարեալ հնազանդու-
թիւն մը պէտք չէ որ ունենանք մեր
ծնողացը, հասպա անոնց վրայ կա-
տարեալ վատահու թիւն մը ունենա-
լու ալ պարտաւոր ենք:

Աստուած՝ որ մեր վրայ հսկելու
ծանր հոգը անունց վրայ դրեր է,
մեզի առաջնորդելու համար հար-
կաւոր եղած մտաւորական լուսա-
ւորութիւններն ալ անունց տուեր է:

Քանի որ մենք տղայ ենք, ան-
ձամբ ինքզինքնիս կառավարելու
անկարող ենք, անունք մեզ պիտի
վարեն: Հօրմէ ու մօրմէ զատ մե-
կը չկայ որ մեզի վայելուչ խրատ-
ներ տալու համար բաւական գուժ
ունենայ վրանիս: Ծնողաց վրայէն
վատահուժիւնը վերցընելը՝ տղու
մը համար ամենամեծ թշուառու-
թիւն մըն է:

Անվատահուժիւնը կրնայ տղուն
ստախօտութիւն սովրեցունել. եւ
ստախօտութիւնը ատելի մոլութիւն
մըն է, որ տղան՝ ուրիշ մոլութիւն-
ներու մէջ կը ձգէ: Սուտ խօսիլը
որ եւ իցէ մարդու, միշտ մեծ գե-
շութիւն մըն է, բայց իր հօրն ու

մօրը սուտ խօսելը գրեթէ սրբա-
պղծութիւն մըն է :

Անոնց կեղծաւորութիւն ընելը
եւ անոնցմէ ճշմարիտը պահելը,
թէպէտեւ սուտ չըսելու ջանք ընե-
լով ալ ըլլայ, միշտ աղետալի ու
դատապարտելի բան մըն է, որով-
հետեւ մեր ծնողքը անանկ անհատ-
նում բաներ գիտեն, որ մենք չ'ենք
գիտեր. կը տեսնեն այն վտանգները
որոնց մէջ իյնալու վախը կ'ունե-
նանք, անոնք մինակ անոնցմէ հե-
ռու կենալը մեզի սովրեցընել կըր-
նան : Ուրեմն պէտք չէ որ բան մը
մեր ծնողքէն գաղտուկ պահենք :
Ասով միայն անմեղութեան մէջ
կրնանք յարատեւել եւ միշտ աղէկ
վարուց մէջ հաստատ մնալ :

Թէ որ մէկը խրատէ տղայ մը, ա-
ռանց իր ծնողացը գիտութեանը
բան մը ընելու համար, տղան պէտք
է որ սոսկալով հերքէ այն խրատը :

Թէ որ մէկը տղու մը ըսէ անանկ
խօսքեր ու անոր ապսպրէ որ իր
հօրն ու մօրը չ'ըսէ, տղան պէտք
է որ ան մարդը իրեն կորուստը
խորհող թշնամին կարծէ, որովհե-
տեւ ինչո՞ւ համար իր ծնողացը չ'ը-
սէ անանկ բան մը, թէ որ այն բա-
նը դատապարտելի ու վտանգաւոր
չէ :

Վերջապէս, բաւական չէ մեր
ծնողացը մեր գործքերուն ու մեր
խորհուրդներուն վրայօք անկեղծ
համար տալը, հապա պէտք է որ
մտիկ ընենք անոնց սովբեցուցած
բաներուն՝ յարգական հնազանդու-
թեամբ, անոնց բարի օրինակներէն
օգուտ քաղենք, եւ բոլոր մեր կե-
նացը մէջ հետեւինք այն խրատնե-
րուն, որ մեզի կու տան մեր տղա-
յու թեան ատենը :

Որովհետեւ մեր անոնց տալիք
մեծարանաց եւ վատահու թեան ա-

մենէն ապահով նշանը անոնց սով-
րեցուցածներուն հետեւին է մեզի
համար, այսինքն անանկ շարժիլ ա-
մեն բանի մէջ, որ բողբոջին Աս-
տուծոյ հաճելի եւ ազնիւ մարդոց
յարգանացը արժանի ըլլանք:

Հայր մը ու մայր մը որ կը տեսնեն
իրենց տղուն բարի վարքը, իբր թէ
երկրիս վրայ արքայութիւնը կը
գտնեն. անոնց արուած գովեստ-
ները կ'զմայլեցընեն իրենց ականջ-
ները, եւ անոնց առաքինութիւն-
ները իրենց սրտին ուրախութիւն
կը պատճառեն:

Մեր ձեռքն է անոնց այս երջան-
կութիւնը պատրաստել: Քալենք
ուրեմն հաստատութեամբ եւ քա-
ջութեամբ՝ բարութեան ճամբուն
մէջ. յաղթենք տղայական թեթե-
ւութեան ու երիտասարդութեան
կիրքերուն, եւ միշտ հաւատարիմ
ըլլանք պարտուց սուրբ օրէնքին:

Բայց սակայն որչափ որ հաստատ
միտքը դրած ըլլայ մէկը, դժուար
է որ տղայու թեան հասակին մէջը
ամեն սխալմուկներէն անձը պահ-
պանէ :

Ուրեմն թէ որ տղայ մը դժբաղ-
դաբար սխալմուկի մը մէջ իյնայ,
ի՞նչ ընելու է. ան բանին վրայօք
զղջալ եւ անոր դարման ընել պէտք
է : Յանցանքի մը վրայ զղջալը՝ այն
յանցանքը գործած ըլլալուն համար
սաստիկ ցաւ իմանալ մըն է :

Յանցանքը ջնջելը՝ իմացած զըղ-
ջու մը յայտնել, անոր ներումը ըս-
տանալ, ու որչափ որ կարելի է, ա-
նոր հետեւանքները անհետ ընել
է : Զղջումը պէտք է շուտ ըլլայ,
եւ մէկ վայրկեան մը անգամ խրղձ-
մրտանքին աղաղակին դէմ կենալու
չէ :

Զղջումը պէտք է որ անկեղծ ըլ-
լայ. մէկ ընդունայն ու անզօր ցաւ

և ու մը վրայ չը կայանայ, հասցա հո-
գին խորին կերպով մը շարժելու է :

Զղջումը պէտք է որ տեւողական
ըլլայ, թէ որ շուտ մը նուազի,
մարդ ա շատ դիւրու թեամբ նոյն կամ
ուրիշ յանցանքի մը մէջ կիյնայ :

Երբ որ զղջումը շուտ, անկեղծ ու
տեւողական է, իսկոյն դարձան կը
տարուի : Հպարտութիւնը բնաւ
արդեւք ըլլալու չէ այս դարձանին
դէմ : Հոգւոյ ազնուութիւն մըն է
համարձակ ճանչնալ իր պակասու-
թիւնները եւ անոնք համբերու-
թեամբ ապաշխարել : Բայց անոնց
մէջը մնալը միշտ ամօթ է, շատ ան-
գամ յիմարութիւն եւ երբեմն
մեղք է :

Յանցանքի մը դարձան տանելը
բաւական չէ, այլ պէտք է նորէն
անոր մէջ իյնալէն հեռու փախչիլ :
Երանի ան տղուն որուն յանցանք-
ները քիչ ու շուտով դարձանուած

են, աւելի երանի անոր, որ իր առաջին տարիներուն մէջը կատարեալ անմեղութիւնով իր անձին մութիւններէ ու աշխարհական աղմուկներէ ազատ երիտասարդութիւն մը կը պատրաստէ :

ԱԼԵՔՍԻԱՆՈՍ

Փոքրիկ Ալեքսիանոսը իր մայրը կորսընցընելու թշուառութիւնը ունեցեր էր : Իր հայրը, որ ուրիշ աղայ չունէր, աս աղուք կը մխիթարուէր ու երջանիկ կը սեպէր զինքը : Ալեքսիանոս առաքինութեան համար եւ աշխատութեան սիրովը բարի յարմարութեամբ ծրնած ըլլալով, յաջողակ էր, ան բաներուն մէջ որ իրեն կը սովբեցնէին : Իր պարապ եղած ատենները կը սիրէր առաւել գծագրութեան պարասիլ, այս սքանչելի մէջ շատ

ճարտար եղած էր : Մեծ հայելիի մը առջեւ նստելով, իր համանման պատկերը շինելու յաջողեցաւ :

Իր հօրը տօնախմբութեան օրը անհիշայ անոր ընծայ ըրաւ, հայրը այս նուէրին վրայ զուարճանալով իր սենեակին մէջը կախեց այն պատկերը : Քնանալէն առաջ ուրախութեամբ կը նկատէր իր Ալեքսիանոսին պատկերը, արթնցած ատենն ալ իր առաջին նայուածքը դէպ 'ի անոր կ'ուղղէր :

Ալեքսիանոս դժբաղդաբար տասն եւ ութը տարուան հասակին մէջ սկսաւ իր վարքը փոխել :

Իր հօրեղբօրորդիներէն մէկը, որ իրմէն չորս տարու մեծ եւ արդէն իր գործքերուն ու հարստութեանը ինքնագլուխ տէր էր, ջանաց զինքը մոլորեցընել իր գէշ խրատներովը եւ իր վտանգաւոր օրինակներովը :

Համոզեց զինքը թէ հայրը շատ
խիստ է, եւ ստիպեց որ հօրը հսկո-
ղութենէն ազատ մնայ, արգիլուած
զբօանքներուն ծածուկ անձնա-
տուր ըլլալու համար:

Առջի բերանը Ալեքսիանոս դէմ
կեցաւ: Սակայն օր մը ապահով ըլ-
լալով թէ իր յանցանքը չպիտի
յայտնուէր, անհոգութեամբ թող
տուաւ իր անձին գործել մէկ դի-
մադարձութեան մեղք մը որն որ
թեթեւ կը կարծէր: Բայց անհնա-
զանդութեան առարկան որչափ որ
փոքր ալ ըլլայ, միշտ ծանր մեղք է:

Իրաւցրնէ, երբոր Ալեքսիանոս
սկսեց մէկ արգիլուած զուարճու-
թեան մը անձնատուր ըլլալ՝ ու այն
աղետալի զուարճութեան համը որ
առաւ, շատ մօտեցաւ իր կորըստ-
եանը: Անզգալի կերպով մը իր բա-
րի յօժարութիւնները խոտորեցան,
կը միտքն անգամ մթնցաւ, սկսաւ

անանկ յայտնապէս չպահել իր
պարտքերը, որ կարծես թէ բնաւ
չէր իմանար:

Հայրը, որ ասանկ մէկ փոփոխու-
թեան մը վիշտով սիրտը կը ճմլուէր,
ամեն միջոցներ գործածեց որ հե-
ռացնէ իր թշուառ տղան այն ան-
դունդէն, որուն մէջ պիտի գահա-
վիժէր: Երբեմն մէկ գորովայնից
քաղցրութիւն մը գործածեց, եր-
բեմն իմաստուն բունութիւն մը:
Բայց ոչ սաստկութիւնը, ոչ քաղց-
րութիւնը կրցան աղէկի դարձնել
այս մոլորեալ հոգին:

Սակայն Ալեքսիանոս երբեմն կ'ա-
մրչնար իր յանցանքներէն. ու աղէկ
առաջադրութիւններ կ'ընէր: Հօրը
գիրկը նետուելով կուլար դառնա-
պէս եւ կը խոստանար աղէկ վարուիլ:

Բայց զղջման ամուր մնալու հա-
մար հաստատութիւն պէտք է, որն
որ Ալեքսիանոս ամենեւին չունէր:

Շուտով նորէն ունկն կը դնէր իր
նենգաւոր բարեկամին հրապոյրնե-
րուն, եւ իր խոստմունքները մոռ-
նալով դարձեալ կ'իյնար իր առջի
մոլութիւններուն մէջ:

Վերջապէս հայրը իրաւամբ բարե-
կացած եւ խիստ շատ անհանգիստ
ըլլալով, միտքը դրաւ արմատախիլ
ընել այն չարիքը: Գիտցեր էր որ Ա-
լեքսիանոսը անհնազանդութեան
մէջ ձգողը իր եղբօրորդին էր, յան-
դիմանեց չարաչար այն խոտորեալ
պատանին. իր առջեւէն վռնտեց,
արգիլեց անոր՝ որ բնաւ իր տունը
չմտնէ, եւ Ալեքսիանոսին ալ խիստ
պատիժներ սպառնացաւ, թէ որ
անկէ ետեւ անոր հետ յարաբե-
րութիւն մ'ունենայ:

Զարերիտասարդը բարկութեամբ
լցուած միտքը դրաւ վրէժ առնել:
Եկաւ գիշեր ատեն, գտաւ Ալեք-
սիանոսը. որն որ իրեն եղած ար-

գեղքներուն հակառակ անոր մտիկ
ընելու դատապարտելի տկարու
թիւնը ունեցաւ, ու յորդորեց որ
փախչելով ազատի իր հօրը խատու
թենէն:

Այս առաջարկու թիւնը լսած ժա
մանակը առջի բերանը Ալեքսիանոս
զարհուրանօք սառածի պէս եղաւ,
բայց իր հօրեղբօրորդւոյն խօսքերը
փարատեցին այս զգացումը, եւ շփո
թեցին իր գաղափարները. մոլորած,
խելքը գլխէն գացած, հաճեցաւ,
եւ մոռնալով Աստուծոյ եւ իր հօ
րը համար ունեցած պարտքերը,
ձգեց տունէն փախաւ: Բոլոր պատ
րաստու թիւնները իր հօրեղբօրոր
դին առաջուց ըրած էր, եւ մէկը
չկրցաւ անոնց հետքը գտնել: Մէկ
տեղ գացին հեռու քաղաք մը, ուր
տեղ ամեն տեսակ անկարգու թիւն
ներու մէջ ինկան:

Ահա Ալեքսիանոսի ըրածը, այն

որ երբեմն շատ աղէկ եւ շատ իմաստուն էր: Տէս մինչեւ ուր կրնայ իյնալ ան տղան, որ առաջին յանցանքի մը տեղի տալու տկարութիւնը կ'ունենայ:

Այս յիմար երիտասարդը երկար ատեն չվայելեց իր յանցանաց պտուղը: Երբոր իր առջին մոլեգնութիւնը փարատեցաւ, յիշեց իր հայրը եւ խղճմտանքը սկսաւ զինքը տանջել:

Իր տանջանքը ամեն վայրկեան աւելի խիստ կ'ըլլար: Չկար երբեք զուարճութիւն եւ ոչ երբեք հանգիստ իրեն համար: Այն խնջոյքներուն ու հանդէսներուն մէջ ուր որ զինքը կը տանէին, գեղնած ու խռոված էր, եւ երեսէ ձգած հօրը դէմքը իր սրտին մէջը հազարաւոր խթաններ կը մխէր: Երբեմն կ'երեւակայէր իր հայրը որ կը հառաչէր ու արտասուք կը թափէր, եր-

բեմն կը կարծէր որ անիկա բար-
կութեամբ բորբոքած էր, եւ իր
յանցաւոր սղան անիծելը կը լսէր:
Աս աղետալի պատկերները իր ե-
րազներուն մէջն անգամ անդադար
կը ներկայանային, եւ իր այն կարծ
ու ընդմիջեալ քունը՝ որ իր խղճին
տաղնապները իրեն կը թողէին վա-
յելել, կը խռովէին: Ա. յսպիսի կեանք
մը անոր անտանելի եղաւ: Միտքը
դրաւ ամեն բան ընել իր յանցանքը
ջնջելու եւ նորէն իր հօրը հաճո-
յանալու համար: Այ սուտ պատ-
կառանքը, ոչ ալ պատժոյն վախը
կրցան զինքը նուաճել: Խղճին խայ-
թը մաքրեր էր այս յանցաւոր սիր-
տը, եւ ցրուելով անոր տկարու-
թիւնը ու միանգամայն իր անտախ-
յոյսերը, ուղիղ դատողութիւն մը
եւ զօրութիւն մը վրան եկեր էին:
Բաժնուեցաւ մշտնջենաւորապէս
ան խաբերայ բարեկամէն որ իր ե-

րիտասարդութիւնը մոլորեցուցեր
էր, եւ ձամբայ ելաւ դէպ իր հայ-
րենի երկիրը:

Գեղէն քիչ մը յառաջ շինուած
էր իր հօրը տունը, զուարճալի պար-
տէզներով շրջապատած եւ առանձ-
նակի տեղ մը:

Հասնելով բլուրի մը վրայ, ուս-
կից կը տեսնուէր այս տունը, Ալեք-
սիանոս կը կենայ սիրտը ձմլած: Չը
կրնար իր հեծեծանքները բռնել,
իւր աչքերը կը լեցուին արցունքնե-
րով: “Ո՛հ հո՛ս է ուրեմն, պօռաց
Ալեքսիանոս ընդհատեալ ձայնով մը,
հո՛ս անցուցեր եմ իմ տղայութիւնս,
անոր քով՝ որն որ արժանի չեմ ին-
ծի հայր կոչելու ”:

“Ո՛հ, որքան երջանիկ էի երբոր
իմ մի միայն փափաքս անիկա գոհ
ընել եւ անոր հաճելի ըլլալ էր,
երբոր աշխատութիւնն ու ուսմուն-
քը կը սիրէի, երբոր բոլոր իմ զուար-

ճուրձիւններս անմեղ եւ մաքուր
էին: Այս երջանիկ ժամանակը նո-
րէն պիտի ծնանի: Ահա ես եմ, հայր
իմ, նորէն կուգամ, քու Ալեքսիա
նոր նորէն քեզի կը դիմէ „:

Եւ երբոր արագութեամբ բլու-
րէն վար կ'իջնար, իր յանցանքը
մտածելով յանկարծ զարհուրան-
քով սառեցաւ. իր ոտքերը գետ-
նին վրայ շղթայի զարնուածի պէս
կը մնան, մէկ պաղ քրտինք մը իր
բոլոր անդամներէն կը վազէ: “Ե՛ս,
ե՛ս անոր աչքին պիտի երեւամ . . .
աս ըրած բաներէս ետքը . . . ո՛հ,
սխալ կարծեցի որ անոր առջեւը եւ-
լելու բաւական զօրութիւն պիտի
ունենամ: Ո՛չ, չպիտի համարձակիմ
երբէք, ես շատ յանցաւոր եմ: Ի՞նչ
երեսով անոր դիմացը պիտի ներ-
կայանամ: Ի՞նչպէս պիտի յուսամ
թէ ինձի նորէն պիտի սիրէ, երբոր
իմ փախչելովս անոր սրտին մէջ

մէկ դաշոյն մը խօթեցի : Ինծի պիտի վռնտէ , ինծի պիտի անիծէ : Ես ինքնա ատոնց արժանի եղայ ։

“ Ինծի համար թողութիւն չկայ : Ես անողորմ տղայ մը ու բոլոր բնութեան առջեւ սոսկալի հրէշ մըն եմ ։ ”

Աս խօսքերը ըսելով խեղճ Ալեքսիանոսը խօտին վրայ կ'իյնայ կը մընայ , եւ շատ սաստիկ ցաւերով կը տազնայի :

Բայց շուտով ներքին ձայն մը , մէկ երկնային ձայն մը կը լսուի իր սրտին մէջ ու զինքը կը քաջալերէ : “ Ո՛հ , պօռաց , հայր մը Աստուծոյ պատկերն է , եւ իրեն գթութիւնը Աստուծոյ ողորմութեանը պէս անսպան է : Ո՛չ , որքան որ գէշ է իմ վարքս , անդ առնալի կերպով մը չեմ դատապարտուած , ո՛չ , իմ հայրս ինծի չ'ատեր , ինծի չ'պիտի անիծէ ։ ”

“ Պիտի գթայ իմ խղճիս տազնայներուն վրայ : Թէ որ չ'ուզեր

Նորէն զիս իր տղուն պէս ընդունիլ ,
աղէկ . ան ատենը անկէց պիտի խընդ-
րեմ որ զիս ընդունի իր ծառանե-
րուն եւ իր ունեցած գործաւորնե-
րուն կարգը : Աշխատութեամբ եւ
զրկանօք իմ յանցանքներս պիտի
քաւեմ , իմ զղջմանս անկեղծու-
թիւնը փորձով պիտի յայտնեմ , պի-
տի արժանի ըլլամ որ նորէն իր գիր-
կը ինծի բանայ , եւ զիս կրկին իր
որդին կոչէ 93

Իր աւազադրութիւնը հաստատ
էր , բայց ինքը գեղնած էր . բոլոր
իր անդամները կը դողային եւ չէր
գիտեր թէ ինչպէս իր դարձը իմա-
ցընէ եւ թողութիւն խնդրէ :

Վերջապէս մէկ որոշեալ ժամ մը ,
երբ գիտէր թէ հայրը սովորաբար
պարտէզներուն մէջ դբաղած կ'ըլ-
լար , գաղտուկ տունը կը մտնէ , հոն
կը գտնայ մէկ ծեր ու հաւատարիմ
կին մը՝ որ իր մանկու թեան ժամա-

նակը իրեն վրայ խնամք տարերէր, եւ
զինքը տեսնելով զարմանքէն եւ ուրա-
խութենէն քիչ մնաց պիտի մարէր ։

Կը մտնէ ան կնկանը հետ իր հօրը
սենեակը . ի՞նչ կը տեսնէ, իր պատ-
կերը միշտ մի եւ նոյն տեղը, այն
իւր պատկերը, որ կը կարծէր թէ
այն դատիկոնէն աքսորեալ էր ։ Այս
տեսնելով նորանոր ուժ մը կառնէ,
եւ իր դարձն ու զղջումը հօրը ի-
մացունելու համար գորովական եւ
ճարպիկ միջոց մը կը մտածէ ։

Պատկերը վարկ'իջեցընէ, ու ձեռք
կառնէ իր մատիտները ։ Այս պատ-
կերը որ առաջին Ալեքսիանոսը կը
ներկայացընէր, աչքերը անմեղու-
թեան ուրախութեամբը լեցուած
եւ շրթունքները երջանկութեան
ժպիտով զարդարուած, կաւրէ,
կուղղէ, կը փոխէ շուտով գլխաւոր
գիծերը ։ Իր դէմքը որ առաջ շատ
զուարթ էր, հիմայ վիշտ ու պատ-

կառանք կը յայտնէ, եւ զղջումը
կը նկարուի արտասուօք թրջուած
աչքերուն մէջը: Նմանութիւնը
նոյնն է, միշտ ինքն Ալեքսիանոսն է,
բայց աղերսարկու ու տառապեալ
Ալեքսիանոսը:


Կը լսէ սանդուխին վրայ իր հօրը
քայլերուն ձայնը, շուտով պատկե-
րը իր տեղը կը դնէ ու քովի խու-
ցին մէջը կը պահուրտի:

Հայրը սենեակը կու գայ, իր ա-
ռաջին նայուածքը իր սովորու թեա-
նը համեմատ, կուղղուի դէպ իր
տղուն պատկերը: Չայն տեսներով
աղաղակ մըն է կը բրցընէ, բայց չէ
թէ նզովքի ու բարկութեան ար-
ձագանք մը, հապա ուրախութեան
եւ երջանկութեան նշան:

“Իմ տղաս, իմ Ալեքսիանոսս կը
զղջայ, ինձի կրկին կը դիմէ: Եկ՛ուր,
ո՛հ եկ՛ուր, քու հայրդ քեզ կը կո-
չէ, քեզի կը ներէ”:

Ալեքսիանոս կը վազէ խուցէն,
 կ'իյնայ իր հօրը ոտքը, անիկա զին-
 քը գետնէն կը վերցընէ, եւ կը
 գրկէ: Հաշտութիւնը կը կնքուի ա-
 մենագորովալից գգուանքներով:
 Այս օրուրնէ 'ի վեր Ալեքսիանոսին
 վարքը անպարսաւ եւ ուրիշ պա-
 տանեաց արժանաւոր օրինակ մը ե-
 դաւ:

Ուրախակից ըլլանք մենք ալ ա-
 նոնց, որ ասոր պէս զղջման միջո-
 ցով նորէն դէպ 'ի առաքինութիւն
 դարձած են. բայց աւելի ուրախա-
 կից ըլլանք անոնց, որ ամենեւին
 առաքինութենէ չհեռանալու բա-
 րեբաղդութիւնը ունեցեր են:



ԾՆՈՂԱՑ ՀԱՄԱՐ ՊԵՏԻ ԵՂԱԾ ՊԱՏԻԻ
 ՈՒ ՄԵԾԱՐԱՆԻ

Զէ թէ մինակ մեր տղայու թեան
 ու մեր երիտասարդու թեան ատենը

պէտք է որ մեր ծնողքը պատուենք
ու յարգենք, հասցա բոլոր մեր կե-
նացր մէջ. եւ նաեւ քանի որ տա-
րիքնիս առնենք, այնքան ալ մեզի
համար սուրբ է այս պարտքը. որով-
հետեւ մեր օրինակը աւելի ներ-
գործութիւն ունի, մանաւանդ պա-
տանիներուն վրայ:

Չկայ երբէք արժանաւորութիւն,
որքան փառաւոր ալ ըլլայ, որ կա-
րենայ մեզի այս պարտքէն ազատել:

Քանի որ կը բնակինք մեր ծնողա-
ցը քով, այս մեծարանքը պէտք է
որ յայտնենք անոնց՝ հաճելի ըլլա-
լու շարունակ զգուշութեամբ մը,
փութաջան տեսութիւն ընելով,
հանապազօրեայ խնամքներով: Թէ
որ անոնցմէ հեռացած ենք, պէտք
է անոնց միշտ նամակ գրել, տեղե-
կանալ անոնց որպիսութեանը, ա-
մեն մեզի վերաբերեալ բան անոնց
հաղորդել, կարեւոր բան մը չընել

առանց անոնց հարցընելու, եւ
պէտք է կարելի եղածին չափ յա-
ճախ անոնք տեսնելու երթալ:

Բաւական չէ որ մենք մինակ ա-
նոնք պատուենք, այլ պէտք է պար-
տաւոր ընենք մեր կինն ալ, մեր
տղաքն ալ, մեր ծառաներն ալ ա-
նոնց շատ մեծարանք ցուցընելու,
պարտաւոր ենք սովրեցընել մեր
փոքր տղոցը, որ մեզի չափ պատ-
ուեն զանոնք. թէ որ ծնողքէն ա-
ւելի ուսումն ձեռք բերած ըլլանք,
պէտք չէ որ ասոր համար հպար-
տանանք ու մեզի անոնցմէ վեր
կարծենք, որովհետեւ աւելի աղէկ
պիտի ըլլար խորին տգիտութեան
մէջ մնալ, քան թէ ուսմունք սով-
ըիլ թէ որ այս ուսմունքը պիտի ա-
պականէր մեր սիրտը եւ մեզի ա-
պերախտ ու տմարդի տղաքներ պի-
տի ընէր:

Երբեմն երիտասարդ մարդ մը իր


բնական ճիւղերովը, իր արիւ-
թեամբն ու նախախնամութեան
մասնաւոր շնորհիւր իր առաջին
աատիճանէն շատ վեր կ'ելլէ, հա-
րուստ, զօրաւոր եւ երեւելի կ'ըլ-
լայ: Այն ատենը պէտք է որ իրեն
մէկ անպատմելի երջանկութիւն
մ'ըլլայ իր հայրն ու մայրը մաս-
նակից ընեն իր վայելած բարիքնե-
րուն. ասիկա պարտք մըն է, բայց
այս պարտքին կատարումը անանկ
հաճելի է, որ կրնայ միանգամայն
մէկը անիկա բերկրութիւն մը կուշել:
Եւ բերկրութեանց մէջ անկէց ա-
ւելի քաղցր, աւելի պատուաւոր ու
աւելի մաքուրը չկայ:

Տեանուեր են, կ'ըսեն, երբեմն ա-
նանկ տմարդի տղայք որ իմաստուն
կամ հարուստ ըլլալով, կ'ամչնան ե-
ղեր իրենց ծնողացը աղքատութե-
նէն ու հասար հագուստներէն: Չեմ
կարծեր որ անանկ հրէշներ ըլլան,

կամ թէ ըլլան ալ շատ քիչ են, եւ
բոլոր պատուաւոր մարդոց անարգա-
նաց ու սոսկման առարկայ մըն են:

Վերջապէս՝ այն մեծարանքը որ
մեր հօրն որ մօրը կը պարտաւորինք,
պէտք չէ որ անոնց կենացը հետ դադ-
րի: Պէտք է որ մեծ խնամքով պահենք
անոնց յիշատակը եւ պատուենք ա-
նոնց անունը մեռնելուն ետքն ալ:

Կողմս ըստի խաչ — Երկուսն



ԴԵՐՁԱԿՆ ՈՒ ՍԵՂԱՆԱԻՈՐԸ

Պօսի քաղաքներէն մէկուն մէջ կը
կենար մէկ շատ աղքատ՝ բայց իր
վիճակէն շատ գոհ բարի ծեր դեր-
ձակ մը. անոր հետ էր նստել իր կի-
նը, որ զուարթու թեամբ անոր աղ-
քատութեանը մասնակից կ'ըլլար,
եւ անոր կեանքը աւելի քաղցրա-
ցընելու կը փութար. երկուքն ալ
շատ ծերացեր էին, բայց կը վայել-

լէին մէկ կատարեալ առողջութիւն
մը եւ աղէկ ալ կ'աշխատէին :

Իրենց ճրանչիսկոս անուշով մէկ
հասիկ գաւակը, որուն իրենց վի-
ճակէն շատ վեր կրթութիւն մը
տալ տուեր էին, իրենց քովէն մեկ-
նած էր շատ ժամանակէ 'ի վեր
Հնդկաստան երթալու, եւ բաղդ
փնտուելու համար :

Քսան տարիէն աւելի էր որ ա-
նիկա չէին տեսեր, միշտ անոր վը-
րայօք կը խօսէին ամեն օր կ'աղաչ-
ին Աստուծոյ որ անիկա երբէք ե-
րեսէ չձգէ. չէին ետ կենար ամեն
կիրակի օրերը զինքը հրապարակա-
կան աղօթից յանձնելէն այն քա-
հանային միջոցաւ, որ իրենց վրայ
շատ համարում ու գուժ ունէր :

Իրենց տղան ալ իր կողմէն ծը-
նողքը չէր մոռնար : Շատ արկած-
ներու հանդիպեր էր, եւ անոր
համար չէր կրցեր երբէք իր լուրե-

ըր անոնց տալ, որովհետեւ անանկ
մէկ գաւառ մը գացած էր, որ հա-
ղորդութիւն մը չ'ունէր Գաղղիայի
հետ: Սեղանաւոր եղաւ, ժողովեց
իր աղէկ վարմունքովը մեծ հարըս-
տութիւն մը, նորէն Գաղղիա եկաւ՝
իր արուեստը Փարիզի մէջ բանե-
ցընելու համար:

Երբոր իրեն մէկ տուն մը ընտրեց
եւ ամեն բան կարգադրեց, միտքը
դրաւ անձամբ տեղեկանալ իր ծնո-
ղացը կենցաղավարութեանը վրայ:
Սպասաւորներուն իրեն չսպասել
հրամայելէն ետքը, ձին հեծաւ ա-
ռանց մէկը իր հետը առնելու, եւ
գնաց իր ծննդեան երկիրը:

Իրիկուան ժամը ութին երբոր
ծերունի դերձակը ու իր կինը կը
քնանային, յանկարծ արթընցան
սեղանաւորին իրենց պղտիկ տանը
դուռը զարնելով ըրած դղրդիւնէն:
Հարցուցին թէ “Ո՞վ է”, “Բացէք,

բացէք ըսաւ անոնց, Ծրանչիակոս
տղանիդ է 92

“Ուրիշները գացէք խաբեցէք պա-
տասխանեց պարզամիտ մարդը, ճամ-
բանիդ գացէք, գողեր, հոս ձեզի
համար ընելիք բան մը չկայ, թէ որ
Ստուած անոր կեանքը պահպա-
նած է, Ծրանչիակոս հիմայ Հնդկաս-
տան է :

— Ձեր զաւակը ալ Հնդկաստան
չէ, կրկնեց սեղանաւորը, դարձած
եկած է, անիկա է որ ձեզի հետ կը
խօսի, ձեր տանը դուռը մի գոցէք
անոր — :

— Ելլենք, Յակոբ, ըսաւ ան ա-
տենը կինը, կարծեմ իրաւ ասիկա
Ծրանչիակոսն է, կարծեմ ձայնէն
պիտի ճանչնամ դիները 92

Ելան շուտով երկուքն ալ հագ-
ուեցան արտորնօք : Հայրը ճրագը
վառեց, եւ մայրը գնաց դուռը բա-
նարու տեսաւ Ծրանչիակոսը, եւ

անհնար ըլլալով անիկա շճանչնալ,
անոր ձիտը փաթթուեցաւ: Հայրն
ալ նոյն զգացմունքներով շարժը-
ուած, ինքն ալ դրկեց իր տղան.
Եւ այս երեք անձիները, այնչափ եր-
կար ատեն իրարմէ հեռու մնալէն
ետեւ մէկտեղ եկած տեսնուելով
զուարճացած, շէին կրնար կշտանալ
իրարու սիրոյ նշաններ տալու բերկ-
րութենէն: Այսչափ քաղցր շարժ-
մունքներէն ետքը, սեղանաւորը իր
ձիուն երասանակը հանեց և ախոռի
մը մէջ դրաւ, ուր որ տանը անուցիչ
կով մը կար, եւ պատմեց ծնողացը
իւր ճանապարհորդութեանը ու իր
կենացը զանազան արկածները:

Պատմութիւնը երկար տեւեց եւ
կարելի էր որ անտարբեր անձիներ
ճանճրացնէր, բայց մէկ տղայ մը որ
իրեն վերաբերեալ բաները կը պատ-
մէ, շկրնար հօր մը ու մօր մը ուշադ-
րութիւնը հագնեցնել. ծնողաց հա-

մար շնչին դէպք մը չկայ, ուստի
անյազու թեամբ անիկա մտիկ կ'ը-
նէին, եւ անոր ըսած ամենափոքր
բաներն անգամ անոնց վրայ սաս-
տիկ վշտի կամ ուրախութեան տը-
պաւորութիւն մը կ'ընէին:

Երբ որ պատմութիւնը վերջացուց,
իրենց ըսաւ թէ եկեր էր, որ իրեն
ընչից մէկ մասը անոնց ընծայէ, եւ
աղաչեց իր հօրը որ ալ չաշխատի.
“ Զէ՛, իմ տղաս, ըսաւ անոր Յակոբ,
կը սիրեմ իմ արուեստս, անիկա չպի-
տի ձգեմ ”:

— Ինչո՞ւ համար, կրկնեց սեղա-
նաւորը. ալ հանգչելու ժամանակ չէ՞
արդեօք: Չեղի չեմ առաջարկեր
դալ ինծի հետ Փարիզ բնակիլ, աղէկ
գիտեմ որ այն մեծ քաղաքը կենա-
լը ձեզի համար զուարճութիւններ
չը պիտի ունենայ: Չեմ ուզեր ձեր
հանգիստ կեանքը խռովել, բայց
գտնէ ինքզինքնիդ դժուար աշխա-

տու թենէ խնայեցէք, եւ ապրեցէք
 Հոս հանգիստ, որովհետեւ կրնաք ։
 Մայրը տղուն զգացմանցը կողմնա-
 կից եղաւ, Յակոբ ալ ան ատեն հա-
 ճեցաւ ։ “Շատ աղէկ, Ծրանչիակոս,
 ըսաւ հայրը, քեզի հաճելի ըլլալու
 մտօք ալ չպիտի աշխատիմ գեղին
 ամեն բնակիչներուն համար, մինակ
 իմ ու Պ. քահանային զգեստները
 պիտի կարկրտեմ ։”

Այս դաշինքէն ետքը սեղանա-
 ւորը իրեն համար եփուած երկու
 թարմ հաւկիթը կերաւ, պառկե-
 ցաւ, եւ քնացաւ անանկ զուար-
 ճու թեամբ մը, որն որ մինակ աղնիւ
 բնութիւն ունեցող տղաքները կըր-
 նան երեւակայել ։ Ծրանչիակոս երեք
 օր իր ծնողացը հետ անցուց, ետքը
 անոնց թողուց ասրկի մեծ գումար
 մը ու նորէն Փարիզ դարձաւ ։ Բայց
 տասն եւ հինգ օր ետքը շատ դար-
 մացաւ տեսներով յանկարծ հայրը


որ իր տունը կը մտնէր : “ Ի՞նչ պատ-
ճառ քեզի հոս բերաւ, հայր իմ,
ըսաւ անոր, ” — Տղաս, պատասխա-
նեց ծերունին, նորէն քեզի կը բե-
րեմ քու ստակդ, ա՛ռ անիկա, ես
կ’ուզեմ իմ արուեստովս ապրիլ :
Չանձրութենէն կը մեռնիմ քանի
որ չեմ աշխատիր : — Աղէկ, հայր
իմ, կրկնեց Յրանչիակոս, գեղը դար-
ձիր, շարունակէ, քու արուեստդ
բանեցուր, բայց միայն չնեղանալու
չափ. ա՛ռ քու քսակդ, եւ իմինիս
մի խնայեր :

— Ի՞նչ կուզես որ ընեմ քու ըս-
տակդ, ըսաւ հայրը :

— Ատով աղքատներուն օգնէ,
պատասխանեց անդամաւորը, գոր-
ծածէ ատիկա ինչպէ՛ս որ քահանան
քեզի խրատէ, ” :

Բարի ծերունին, այս պատասխա-
նէն գուարճացած իր գեղը դար-
ձաւ : Իր կնկանը հետ աշխատու-

Թիւնը շարունակեց, բայց առանց
 շատ հոգնելու: Ամեն մէկ վեց ա-
 միսը անգամ մը տղանին կու գար
 զիրենք տեսնել. եւ երբէք չտեսնը-
 ւեցաւ ոչ անկէ աւելի երջանիկ
 տղայ մը, եւ ոչ ալ ասոնցմէ աւելի
 երջանիկ ծնողք մը:



ԱԿՆԱԾՈՒԹԻՒՆ, ԽՆԱԾԻ ՈՒ ՊԱՏԻ ԾՆՈՂԱՑ

Բաւական չէ մեր ծնողքը սիրելը,
 պէտք է անտնց գործքով ալ ցուցնել,
 անտնց երջանկու թեանը համար ա-
 մեն բան՝ի գործ դնելով: Պէտք է որ
 անտնց հետ մէկ քաղցր ու ժրաջան
 վարմունք մը ունենանք. առանց ա-
 նոր ոչ մենք կրնանք երջանիկ ըլլալ,
 եւ ոչ ուրիշները երջանիկ ընել:

Այս առաքինու թիւնը ասանալը
 երբեմն քիչ մը դժուար է. նախ մե-
 զի յաղթելու աշխատու թիւնը ու-
 նինք. ծանր կը թուի մեզի երբէք

չըսել և չգործել մեզի սիրելի եղող
անձանց անհաճոյ բաները. բայց երբ
այս սովորութիւնը մէկ մը ստաց-
ուած է, ջանքն ալ մեզի դժուարին
չէ, եւ ամենապատուական օգուտ-
ներ կը քաղենք մեր վարքէն:

Միշտ շատ գէշ բան է բարկասիրտ
ըլլալ, եւ դժնդակ բնաւորութիւն
ցուցնելը, մանաւանդ հօր ու մօր
դէմ, որով չէ թէ մինակ այլան-
դակ ու անխելք մարդ մը կ'ըլլայ
անանկը, հապա շատ ալ յանցա-
ւոր: Պարապ խօսք մըն է որ կ'ըսեն
թէ՝ երբեմն թէ որ մէկը այսպէս
ինքզինքը մոռնայ, անոր մինակ պատ-
ճառը բնու թեան աշխուժու թիւնն
է, եւ արտին մէջը բան մը չը կայ:

Ասանկ խտտորումները բնաւ չեն
կրնար արդարանալ: Աամարառու-
թիւնը, քաղցրութիւնը, մարդասի-
րութիւնը սիրելի հանգամանքներ
են, որ մարդկային ընկերութեան

դու արձու թիւն կը բերեն : Օտա-
 րականներուն հետ ունեցած վե-
 րաբերութիւններնուս մէջ այս որ-
 պիտութիւնները ապահով միջոց մըն
 են անոնց մարդասիրութիւնը մե-
 զի քաջերու համար, իսկ ընտան-
 եաց մէջ պարտք մըն են : Պարտ մըն
 են մանաւանդ մէկ հօր մը ու մօր
 մը դէմ, որոնք իրենց բարիքներովը
 չափազանց իրաւունք ունին չէ թէ
 միայն ակնածութեան մը, հապա-
 իրենց տղոցը սիրալիր մեծարանացը :

Աւրեմն միշտ անոնց դէմ կամա-
 րար, համբերող ու փութաջան ըլ-
 լանք, միշտ հաճոյական կերպով մը
 պատասխան տանք անոնց : Ասկէ
 զատ ունենանք անոնց համար այն
 խնամքներն ու այն անթիւ յար-
 գանքները որոնք մէկ ճշմարիտ սէր
 մը միշտ մեզի կ'ազդէ :

Իրենց հասակը արդէն տրամու-
 թեան շատ ենթակայ է, անոնք նե-

դելու պատճառ չ'ըլլանք, այլ ընդ-
հակառակն ամեն օր անոնց զուար-
ճութիւն պատրաստելու նորանոր
միջոցներ հնարենք :

Թէ որ մեր փոյթն ու յարգանք-
ները բնաւ չդադրին, մեղ տեսնե-
լով միայն կը զօրանան ու կը հըրճ-
ուին : Անոնց շրթանցը վրայ մեր
ծագել տուած ամեն մէկ ժպիտը
եւ իրենց սրտին մէջ արծարծած
բերկրութեան ամեն մէկ կայծը
անոնց օրերը երկնցներու առիթ
կ'ըլլան, եւ անոնց նորանոր օրհ-
նութիւնները վրանիս կը բերեն :

Ասանկով պիտի ընդունինք մեր
վարքին համար կրկին փոխարէն մը .
մէկ մը մեր ծնողացը երջանկութիւ-
նը տեսնելով, մէկ մ'ալ իրենց օրհ-
նութիւններուն շնորհիւր մեր վա-
յելած երջանկութիւնը, որովհե-
տեւ հօր ու մօր օրհնութիւնները
միշտ Աստուած կը լսէ :

(1836)

Յովհաննա Բառէլը՝ Գուլանժէ
 ծնած էր, որն որ էնտա — է — Լու-
 առ նահանգին մէջ Մոնթաէզոսի
 մօտն է: Իր հայրը որմագործ էր,
 եւ շատ բարի, աշխատասէր, եւ իր
 ընտանիքը աղէկ կրթող մէկը հրու-
 չակեալ էր: Գուլանժէի մէջ անակ-
 մը ունէր, փոքրիկ ալ արտ մը:

Իր Յովհաննա աղջիկը սպասա-
 ւոր էր այն տեղերը բնակող ընտա-
 նիքի մը քով, որ անոր շատ վարձք
 կուտային: Իմացաւ որ իր յիտուն
 եւ հինգ տարեկան մայրը տկարա-
 ցեր էր եւ միայն գաւազանի մը օգ-
 նութեամբ կրնար քալել, հրաժա-
 րեցաւ այն ունեցած շահաւէտ վի-
 ճակէն ու իր մօրը քով եկաւ, ալ
 իր մայրը չը ձգել երթալու պայ-
 մանաւ:

“Ա՛ռ զեմ քեզի հետ կենալ, ը-

սաւ մօրը. եթէ ծառայութիւն մը
պիտի ընեն, աւելի արժան է որ իմ
մօրս ծառայենք քան թէ օտարնե-
րու 92 Բայց քիչ ատենէն հայրն ալ
հիւանդացաւ, մէկ դաժան ցաւի մը
բռնուեցաւ, ու գրեթէ կոյր եղաւ ։
Յովհաննա խնամք տարաւ անոր ալ
իր մօրը պէս, իրեն խնայութեամբը
ժողոված ատակը հօրն ու մօրը հա-
մար պահելէն ետքը, պզտիկ արտն
ալ ծախուեցաւ ։

Աղորմածասիրտ անձեր ազնիւ աղջ-
կանը օգնութեան հասան, որուն
անձնանուէր ծառայութեանը վրայ
ամեն մարդ կը դարձանար ։ Տասը
տարիէն ետեւ հայրը մեռաւ, եւ
Յովհաննա դառնապէս ողբաց անոր
մահը ։ Մէկը անոր ըսաւ . “Ասի-
կա քեզի ու հօրդ համար մեծ ա-
զատութիւն մըն էր ։ Խեղճը շատ կը
տանջուէր . հիմայ դուն ալ քիչ նե-
ղութիւն պիտի կրես ։

— Անոնք որ ինձի այսպէս կը խօսին, ըսաւ Յովհաննէս, կը կարծեն թէ գիտ կը մտիթարեն, սակայն աւելի ցաւ կը պատճառեն. շեն գիտեր թէ ի՞նչպէս կը սիրէի իմ խեղճ հայրս . . . վերջապէս Աստուած իրեն վարձքը տուաւ եւ ալ իմ վարձքս պիտի ունենամ 99 :

Յովհաննէս մինակ մնաց իր մօրը հետ. կը մաներ, կանաչեղէն ժողովելու կ'եիթար, եւ իր ժամանակին մեծ մասը խեղճ հիւանդ մայրը խնամելով կ'անցընէր :

Մայրը, որ մինչեւ այն ատենը կրցեր էր գաւաղանի մը օգնութեամբը քալել, բողբոլին կոյր եղաւ, անդամալուծութիւնն ալ շէր թողուր անոր եւ ոչ քիչ մը շարժիլ. պէտք էր անիկա վերցնել, պառկեցնել, նստեցնել : Յովհաննէս քանն տարիէն աւելի ժամանակ շեղաւ գիշեր մը, որ առանց

արթննալու անցընէր: Մօրը վրայ
ունեցած խնամքներուն պատմու-
թիւնը հազիւ թէ հաւատարու բան
է: Այս կինը շատ բարեպաշտ էր,
ամեն օր կ'աղօթէր իր թիկնաթո-
ւին մէջը: Վերափոխման առջի ի-
րիկուն մը ըսաւ իր աղջկանը: «Վա-
ղը Մայր Աստուածածնին՝ Օգոստոս-
սի տօնախմբու թիւնն է, շատ կը փա-
փաքիմ եկեղեցի երթալ»։ Ասանկ
հիւանդ մէկու մը ընկերանալու հա-
մար աւելի հարուստ վիճակի մը մէջ
թէեւ կառք ալ ըլլալու ըլլայ նէ,
տղաք թէեւ անձնանուէր՝ մեծ
դժուարու թիւններ կը հանեն անոր
առաջը:

Բայց Յովհաննա մեծ եռանդով
մը պատասխանեց՝ «Եկեղեցի՞ եր-
թալ կ'ուզես, շատ աղէկ, բարի
մայր իմ. կ'երթանք, հաստատ՝ ես
զքեզ կը տանիմ, հանգիստ եղի՛ր»։
Ու անոր ձեռքը բռնեց համբու-

րեց, որովհետեւ միշտ քաղցր գրգռանքներով ու գորովալից ակնածութիւններով կը խօսէր անոր հետ:

Ու հետեւեալ օրը Յովհաննա կ'անցընէ իր ձախ ձեռքը մեծ թիկնաթուի մը թելին մէջ, իր մայրը կը կանգնեցընէ, աջ ձեռքովը կը բռնէ անիկա. եւ ծեր մայրը այսպէս պաշտպանուած, գրեթէ հազիւ երկու քայլ կառնէ. . . . ետքը կը կենային, Յովհաննա քիչ մը անիկա կը նստեցընէր թիկնաթուին վրայ, ետքը կը վերցընէր, ու նորէն կ'սկսէին քալել:

Այս դժուարին ճանապարհը երեք քառօրդէն աւելի կը տեւէր, թէպէտեւ հեռաւորութիւնը հազիւ թէ հինգ վարկեան էր:

Ետ դարձած ատեննին, որ նոյն կերպովը կ'ըլլար, Յովհաննա բուրրովին ուրախէր ու կրտէր. «Միւրեւի մայրս, աղէկ աղօթեցիր Աստուծոյն հետեւ, որ ես ինչպէս կ'ըլլայիս, որ ես ինչպէս կ'ըլլայիս»:

տուժոյ, գո՛հ ես, յողնած չե՛ս, ա-
նանկ չե՞ մի, ։

Ասկէ վերջը այս աշխատալի եր-
թեւեկութիւնը կատարեցին որչափ
որ բարի կիներ նորէն ուզեց ։

Յովհաննա մինակ իրեն կը պահէր
այն սեւ հացը, որ բարեպաշտու-
թեան դիւանին սպասաւորը կու-
տար, եւ ծախու կ'առնէր իր մօրը
համար ձերմակ հաց ։

Կարելի եղածին չափ յաճախ կը
պատրաստէր անոր կարագ, պանիր
ու կաթ ։ Իսկ ինքը ուրիշ բան չէր
ուտեր, բայց միայն գետնախնձոր ։

Օր մը մէկը անոր անուշ կար-
կանդակ մը խրկեր էր, ուսկից գը-
րեթէ բնաւ չէին կերած ։ Երկար
ատենէն ետքը, զարմանքով կը տես-
նէին որ դեռ կարկանդակէն հոն
կար ։ Կ'ըսէին. « Բու կարկանդակդ
դեռ չե՛ս լմնցուցեր ։

— Ա՛հ, խնայելով կը գործածեմ

անիկա իմ մօրս համար, կերակու-
րին ատենը անկէց մանր մանր կը-
տորներ կը կտրեմ կուտամ անոր,
որ ախորժանօք կ'ուտէ:

— Ի՞նչ բնաւ չե՞ս ուտեր:

— Մեծ վնաս է թէ որ ես ան-
կէց ուտեմ, խեղճ կնոջը բաժինը
կը քիչնայ, ասիկա անոր փոքրիկ զը-
ուարձու թիւնն է . . . ոչ կը տեսնէ,
ոչ կը լսէ եւ միշտ կը տանջուի . . .
բոլոր կրցածս ալ որ իրեն ընեմ,
դեռ շատ քիչ է, որովհետեւ խեղճ
հիւանդը բոլորովին խուլ եղաւ 99:

Իր մայրը՝ հիւանդութեանցը մի-
ջոցին անանկ աղէկ նստած էր թիկ-
նաթուի մը մէջ, եւ անանկ մաք-
րութեամբ հագուած էր, որ դիւ-
րին էր տեսնել թէ ի՞նչ գորովանօք
խնամարկուած էր:


Երբեմն վիշտը կը խստացնէր իր
բնութիւնը, եւ քանի կ'երթար,
իրեն ծառայելը դժուար կը լլար:

Բայց Յովհաննային քաղցրութիւնն ու կամարարութիւնը բնաւ չփոխուեցան : Անոր այցելութեան եկողներուն կ'ըսէր :

“Ո՛հ, երանի թէ անիկա առջի ատենները ճանչնայիք, շատ ազնիւ կին մըն էր, դժուար ժամանակներու մէջ իր ընտանիքը հոգալու չափէն եւել կ'աշխատէր :

“Ինքը չափազանց քաղցր եւ բարի էր : Երկար ժամանակէ 'ի վեր հիւանդ ըլլալուն թէ որ նեղութիւն կուտայ ալ, յանցանքը իրը չէ, ցաւն է որ ասանկ ընել կուտայ : Ո՛հ, Աստուծոյ առջին աղէկ վարձք պիտի առնէ . . . ” :

Ամեն տղոց օրինակ ըլլալու համար, հռչակուելու արժանի այս ազնիւ աղջկանը վարձքն ալ՝ Աստուծոյ առջին մեծ պիտի ըլլայ :



Մեր ծնողացը ցուցնելու մեծա-
րանաց ամենէն աղէկ նշաններէն
մէկը գորովանօք մեր եղբայրները
ու քոյրերը սիրելն է, եւ միշտ ա-
նոնց հետ կատարեալ բարեկամու-
թեամբ ապրիլն է:

Հօր ու մօր համար՝ իրենց տղոցը
մէջ տեսած միաբանութենէն ա-
ւելի զուարճալի բան չկայ:

Զօրաւորը պէտք չէ որ իր առա-
ւելութիւնները չարաչար գործա-
ծէ. պէտք է ընդհակառակն տը-
կարին համար կամակարուժեամբ
եւ հեղութեամբ լեցուն ըլլայ:

Տկարն ալ իր կողմանէ պէտք չէ
որ չափազանց երես առնէ այն համ-
բերութենէն որ իրեն կը ցուցնեն,
այլ պէտք է հրաժարիլ զգուշու-
թեամբ այն բաներէն որ կրնան իր
եղբայրները բարկացնել:

Պէտք է որ եղբայրներու մէջ ի-
րար նախատել եւ իրարու դարնել
չըլլայ : Ի՞նչպէս աղէկ կրնանք վար-
ուիլ օտարներուն հետ, թէ որ մի-
արանու թիւն պահել չենք գիտեր
մեր յատուկ ընտանեաց անհատնե-
րուն հետ :

Նախ մեզի համար պարտք մըն է
միշտ փոքրերուն բարի օրինակ ըլ-
լալ եւ անոնք մեր վարքովը ու մեր
խրատներովը յորդորել, որ մեր ծը-
նողացը հաճոյ եղած բանը ընեն :

Այս նկատմամբ հասակաւ մե-
ծերը հարկաւոր պարտք մը ունին
կատարելու, որովհետեւ միւսնե-
րէն աւելի խելահաս են, ու իրենց
օրինակը կրնայ աւելի ազդեցու-
թիւն ունենալ, աւելի խափու
պարտական են փոքրերուն հնա-
զանդութեան եւ բարի վարուց
անատգիւտ օրինակներ ըլլալու :

Մէկ անդրանիկ եղբօր մը պարտք

է նաեւ, որ խնամարկէ իր փոքր
եղբայրներն ու քոյրերը, բարեկա-
մութեամբ խրատէ անոնք, բարե-
կամարար յանդիմանէ երբոր յան-
ցանքի մը մէջ իյնան, եւ անոնց
կրթութեանը մէջ հօր եւ մօր օգ-
նական եւ փոխանորդ ձանչցուի :
Ասիկա մեծ պատիւ մը, նաեւ սուրբ
պարտականութիւն մի է :


Պատանիները իրենց քոյրերուն
ամեն տեսակ ակնածութիւններու
մեծարանքներ ընելու են, որովհե-
տեւ անոնք աւելի տկար ու փա-
փուկ ու շատ զգուշութեան կա-
րօտ են : Պէտք է անոնք մխիթա-
րել իրենց նեղութիւններուն ատե-
նը, անոնց օգնել իրենց աշխատու-
թիւններուն մէջ :

Մանաւանդ պէտք է բնաւ չխօ-
սիլ անոնց հետ բարկանալով ու
խատուութեամբ, եւ իրենց առջին
չըսել անանկ բան մը, որ իրենց ա-

կանչին անհաճոյ կրնայ ըլլալ: Աէտք է մեծարել իրենց համեստութիւնը եւ խնայել իրենց դիւրագոգացու թեանը:

Եղբայրներն ու քոյրերը պէտք է որ միշտ իրար մեծարեն, սիրոյ եւ մտադրութեան ամեն տեսակ նըշաններով:

Եղբայրները, թէ որ կարելի է նէ, պէտք է որ ջանան գերազանցել իրենց քոյրերը՝ բարեկամութեան առ մրցանքին մէջը: Արչափ որ անոնց համար մեծարանք ունենան, այնքան ալ կը յարգեն անոնց քաղաքավարութիւնն ու բարի ըզգացմունքները, եւ այն քաղցր միութիւնը որ կը տիրէ ընտանեաց մէջ, կը հրճուեցնէ իրենց հօրն ու մօրը սիրտը:



Փոքրիկ Եւգինէն իր անկողնին մէջն անցուցեր էր գարնան գեղեցիկ օրերը : Երբ բժշկուեցաւ եւ սկսաւ իր ուժը նորէն ստանալ, ծաղիկները միտքը բերաւ, եւ հարցուց թէ “Այս տարի ալ ծաղիկները առջի տարուան պէս գեղեցիկ էին” : Եւգինէ շատ կը սիրէր ծաղիկները, բայց դեռ չէր կրնար դուրս ելլել որ անձամբ ժողովէ :

Ան ատենը իր անդրանիկ Եւգինէնու եղբայրը կողով մ'առաւ, եւ ցած ձայնով իր մօրը ըսաւ . “Երթամ դաշտերուն մէջէն քրոջս շատ գեղեցիկ ծաղիկներ բերեմ : Ա՛հ, դարձած ատենս ինչպէս գոհ պիտի ըլլայ” :

Եւ այս առաջին անգամն էր որ դաշտը ելաւ, որովհետեւ իր քրոջը սենեակէն դուրս չէր ելներ,

քանի որ անիկա հիւանդ էր : Գա-
րունը առաջինէն խիստ աւելի գե-
ղեցիկ երեւեցաւ իրեն . այն ուրա-
խութիւնը որ կիմանար սրտին մէջ
իւր քոյրը ազատուած տեսնելով,
բոլոր բնութիւնը աւելի զուար-
ճալի կ'երեւցընէր իրեն :

Եւգինէոս կը վազէր ուրախու-
թեամբ մէկ կողմէն միւս կողմը
բլուրին վրայ ելնելով ու իջնելով :

Սոխակները կ'երգէին, մեղունե-
րը կը բղղէին, թիթեռները կը
թռչրատէին իւր բոլորտիքը, եւ ա-
մենագեղեցիկ ծաղիկները իւր ոտքին
տակը կը բացուէին . մէկ ծաղկէն
մէկալը կ'երթար երգելով : Շուտով
կողովը լեցուեցաւ, որուն վրայ
դրաւ կարմիր հունտերով գործու-
ած ու խոտէ թելի մը անցուցած
մէկ գեղեցիկ պասկ մը :

Ետքը նայեցաւ ժպտելով իւր շի-
նածին, եւ կաղնիի մը շուքին տա-

Կը կակուղ մամուռի վրայ նատաւ :
 Հոն հանդարտիկ կը նկատէր դաշ-
 տը գարնան ամենագեղեցիկ պայ-
 ծառու թեան ժամանակը, եւ մտիկ
 կընէր հաճութեամբ սոխակներուն
 երգը որ կարծես թէ իրարու կը
 պատասխանէին :

Եւ որովհետեւ հոգնած էր, հոն
 քուլը տարաւ : Երբ մնջիկ կը քը-
 նանար, միրիկ մը ելաւ : Մռայլ
 ամպը բարձրացաւ լռութեամբ,
 կայծակները փայլեցան եւ որոտու-
 մը գոռաց : Յանկարծ հովը մունչեց
 կաղնիին տերեւներուն մէջէն : Տը-
 դան դողալով արթնցաւ, նայեցաւ
 իր բոլորտիքը որ երկինքը սպառ-
 նալից ամպերով ծածկուած էր,
 արեգակին եւ ոչ մէկ ճառագայթը
 դաշտը կը լուսաւորէր : Արթննա-
 լուն պէս որոտման սաստիկ հար-
 ուած մը լսուեցաւ, խեղճ տղան
 սպառնալով կը կենար այս անակնկալ

վրդովմունքը նկատելով : Աւանդ, ա-
հա այսպէս երկրիս վրայ մարդուս
վայելած բոլոր դուարձու թիւնները
միշտ կը խռովին յանկարծական մրը-
րիկներէ :

Անձրեւի խոշոր կաթիլները սկսե-
ցին անցնիլ կաղնիին տերեւներուն
մէջէն : Տղան զարհուրած առաւ
կողովն ու փախաւ : Փոթորիկը եր
գլխուն վրայ էր, եւ անձրեւն ու
մրրիկը շատցան . եւ որտու՛մը կը
գոռար զարհուրելի գղրղիւնով մը :
Շուտ մը Եւգինէոսին հանդերձնե-
րէն անցաւ անձրեւը, ջուրը մա-
զերէն եւ ուսերէն կը վազէր, հա-
ղիւ կրնար իր ճամբան շարունակել :
Թշուառու թիւնը կատարեալ ըլլա-
լու համար, հովի սաստիկ հարուած
մը կողովին մէջը մտաւ, եւ այն-
քան խնամքով ժողոված ծաղիկները
գետնին վրայ ցիր ու ցան ըրաւ :

“ Աստուած իմ, պօռաց, քրոջս

քիչ մը դուարձու թիւն տարու հա-
մար այնքան աշխատանք քաշելէս
եաքը, պէտք է որ ամեն բան կոր-
սուէր : Աւ բարկու թեամբ լցուած
պարսպ կողովը գետինը ձգեց եւ
բողբոջին թրջած հեծկտարով տուն
հասաւ :

Մըրիկը հանդարտեցաւ եւ եր-
կինքը պայծառացաւ : Թռչունները
սկսեցին իրենց երգերը, եւ մշակն
ալ իր աշխատութիւնը, օդը պարզ
էր եւ զով, քաղցր հանդարտու-
թիւն մը կը տիրէր ձորին մէջ եւ
բլուրներուն վրայ : Բնութիւնը բո-
լորովին վերածնեալ կ'երեւէր, եւ
դաշտին բնակիչները շնորհակալու-
թեամբ եւ ուրախութեամբ լըց-
ուած, կը վերցնէին իրենց աչքը
դէպ 'ի ամառը որ կը հեռանար՝ ի-
րենց դաշտերուն օրհնութիւն եւ
յաջողութիւն բերելէն ետեւ :

Եւ գինէտա ամչցաւ իր բարկու-

Թե՛նէ՛ն ու վհատու թե՛նէ՛ն : Նորէ՛ն
դարձաւ լռելեացն իր գետինը ձը-
գած կողովը փնտռելու , ու նոր
ժողիկնեքով լեցնելու համար : Աս-
ղովը դեռ բլուրին վարի կողմն էր :
Մացառ մը անիկայ բռնած ու պա-
տրապարած էր հովին սասակու-
թեանը դէմ : Տղան անիկա վեր-
ցուց , բայց ի՛նչ զարմանք եւ ի՛նչ
ուրախութիւն , երբ իր բողբոսիքը
նայելով տեսաւ որ անձրեւը հազար
նորանոր ծաղիկներ բուսցուցած
էր . հազարաւոր կոկոններ բաց-
ուած էին , եւ ցողին կաթիլները
անդամանդի պէս կը փայլէին տե-
րեւներուն վրայ : Եւ գինէոս մէկ
ծաղկէն միւսը կ'երթար մեղուի մը
պէս , եւ իր կողովը շուտով լեց-
ուեցաւ :

Երբոր արեգակը դէպ 'ի լեռանը
ետելի կողմը հակեցաւ , տղան ու-
րախութեամբ տուն դարձաւ , նկա-

տելով զարմացմամբ իր ծաղիկնե-
րուն գանձը, եւ իր նոր ժողոված
կարմիր հատերով շինուած պսակը :
Մարը մտած արեւուն ճառագայթ-
ները կը լուսաւորէին իր շնորհալի
դէմքը, եւ իր աչքը աւելի փայլուն
ու սիրուն կ'երեւէր, երբ տեսաւ
իւր սիրելի քրոջը ուրախութիւնն
ու շնորհակալութիւնը :

“Եւ գինէոս, ըսաւ անոր իր մայրը,
իրաւ չէ՞ թէ այն զուարճութիւն-
ները որ մենք կը պատրաստենք մե-
զի սիրողներուն՝ մեզի ամենահա-
ճոյ են օ” :

Այսպէս Եւգինէոս կրկնակի եր-
ջանիկ եղաւ, երջանիկ՝ իր քոյրը
զուարճացընելուն համար, եւ ալ ա-
ւելի երջանիկ՝ իր մօրը գոհունակու-
թեանը արժանի ըլլալուն համար :

ՄՆՈՂԱՅ ՀԱՄԱՐ ԶՈՀԵՐ ԸՆԵԼ

ԵՒ ԱՆՋՆԱՏՈՒՄ ԸԼԼԱԼ

Երբոր մեր հայրն ու մայրը տա-
րիքնին կ'առնեն ու ալ շէն կրնար
ինքնիրեննին իրենց ամեն պիտոյքը
հոգալ, մեզի պարտք է աշխատիլ
անոնց համար, իրենց անունդը եւ
ուրիշ ծախքերնին ձարել, եւ անոնց
պատրաստել ան բաները որ կրնան
իրենց կեանքը սուարձալի ընել:

Այս պարտքը յայտնապէս երախ-
տագիտութիւնը մեր վրայ դրած
է: Օրէնքները մեզի կը պատուի-
րեն, բնութիւնն ալ նոյնը մեզի կը
խրատէ:

Յայտնի է թէ մեր կենսատու
ճնողքները իրաւունք ունին պա-
հանջելու, որ մենք իրենց կեանքը
պահպանելու համար կրցածնուս
չափ ամեն բան ընենք:

Նաեւ յայտնի է թէ անտէք որ
մեզ խնամեցին, սնուցին, մեծցու-
ցին անանկ հասակի մը մէջ որ մենք
բան մը չէինք կրնար ընել մեզի
համար, պէտք է որ խնամուին,
սնանին, մենէ օգնութիւն ընդու-
նին, երբ իրենց եւ մեր վիճակը
կը փոխուին, երբ մենք կը դորանանք
ու անտէք կը տկարանան:

Այս պարտքը ամենայն զգուշու-
թեամբ կատարելով, գովեստի մը
արժանի չենք ըլլար, վասն զի ան-
հրաժեշտ պարտաւորութիւննիս
միայն կը կատարենք ու պարտքեր-
նիս կը վճարենք: Այլ որ բնաւ այս
պարտքը չվճարեր, չէ թէ միայն
անարգ ու ազնիւ զգացմունքներէ
զուրկ մէկն է, հապա նաեւ ան-
հաւատարիմ պարտապան մը:

Ինչպէս յայտնի կ'երեւայ, օրին
մէկը ընտիր գեղացիին մէկուն՝ իշ-
խանի մը տուած ճարտարիկ պատաս-

խանէն: Այս իշխանը անոր կը հար-
ցընէր թէ ի՞նչ կ'ընէր իր աշխա-
տութեամբը վատրկած ստակը:

— Երէք մաս կը բաժնեմ, պա-
տասխանեց գեղացին, առաջին մա-
սը իմ պարտքերս վճարելու կը գոր-
ծածեմ, երկրորդ մասը իմ ու կը-
նոջս ծախքերուն համար, գանք
երրորդին, ան ալ մեծ շահով կը
գործածեմ —:

— Այդ խօսքով ի՞նչ ըսել կ'ու-
ղես, հարցուց իշխանը:

— Ահա ասիկ, պատասխանեց
բարի գեղացին, առաջին մասը իմ
ծեր ծնողքս պաշտպանելու համար
կը գործածեմ. ասիկա պարտք մը
վճարել չէ՞ մի: Երրորդ մասն ալ
տղաքներս կրթելու համար, ասի-
կա ալ ստակը մեծ շահի տալ չէ՞
մի. —:

Իշխանը դարմացաւ այս ազնիւ
եւ խելացի պատասխանին: Գորո-

վալից եւ երախտագէտ տղայ մը
այս պարտքին կատարումը իրեն
ճշմարիտ երջանկու թիւն մը կը հա-
մարէ : Արդարեւ ուրչափ քաղցր է
տղու մը սիրուն ծնողաց նախրելի
խնամքներն ու բոլոր կարողութիւն-
ները :

Ի՞նչպէս քաղցր է անոնց մա-
տուցանել իր աշխատութեան պը-
տուղները :

Արքան քաղցր է անոնց վերջին
օրերը բարեկենդանութեամբ ու
երջանկութեամբ անցընել տալ :

Անպատմելի երանութիւն մըն
է երբ մէկը կարող ըլլայ իր անձին
սա խօսքը ըսել :

“ Ինչ որ ընեմ, իմ ծնողքէս ըն-
դունածիս խիստ քիչ մասը կրնամ
իրենց հատուցանել : Բայց թէ որ
իմ երախտագիտութեամբս իրենց
բարերարութեանը չեմ կրնար հա-
ւասարիլ, գոնէ կը ջանամ որ կա-

րելի եղածին չափ մտենամ. թէ որ
անոնք իմ առաջին քայլերս առաջ
նորդեր են, ես ալ այսօր կ'օգնեմ
իրենց դողդոջուն քարուածքին. թէ
որ անոնք ինձի օգտակար խրատներ
տուած են, ես ալ անոնց կը ցու-
ցընեմ այսօր թէ այն խրատներէն
օգուտ քաղած եմ. թէ որ անոնք
իմ ապրուստս պատուով ճարելու
կարողութիւնը տուին ինձի, ես ալ
այսօր իրենց կենացը կ'օգնեմ. թէ
որ անոնք իմ տղայութեանս վրայ
հսկած են, ես ալ իրենց ծերու-
թիւնը երջանիկ կ'ընեմ ։

Ահաւասիկ վեհանձն եւ մա-
քուր սիրտ ունեցողի մը ամենա-
ճշմարիտ երջանկութիւնը ։ Բաւա-
կան չսեպեր իրեն հսկել որ ծը-
նողքը բանի մը կարօտ չ'ըլլան,
հասկա կը հոգայ որ հարկաւոր ե-
ղածէն աւելի ունենան, աւելի կը
սիրէ որ ինքը այն բաներէն զըր-

կուի, ու անոնց պատրաստէ այն
զուարճութիւնները, որոնցմէ իրաւ
կրնայ ինքը հրաժարիլ իրեն հասա-
կին մէջը. բայց այն բաները ծե-
րերու համար՝ իրենց նեղութիւն-
ներուն ասեւը մէկ սփոփանք մը,
մէկ մխիթարութիւն մըն էն:

Բաւական չսեպեր այս պարտքը
անատգիւտ կերպով կատարելը, նա-
եւ անանկ մէկ շնորհալի ու վայե-
լուչ կերպերով կ'ընէ, որ այն պար-
տուց յարգը կ'աւելցնէ ու գինը
կրկնապատիկ կ'ընէ:


Եւ ամեն օր կ'աղաչէ Աստու-
ծոյ, որ պահէ իր ծեր եւ յարգելի
ճնողքը, որոնց իր ընտանեաց մէջ
ըլլալը Աստուծոյ մէկ օրհնութիւ-
նըն է: Այսպէս կը պարտաւորինք
խնամել մեր ճնողքը իրենց ծերու-
թեան ժամանակը:

Ուրիշ առիթներու մէջ որ ա-
նոնք մեզի պէտք մը կ'ունենան, մեր

սիրտը կ'իմացնէ մեզի՝ ինչ որ պի-
տի ընենք :

Հիւանդութեան մը ատեն ա-
նունք խնամելու, անունք վտանգէ մը
ազատելու, իրենց վիշտերը դադ-
րեցնելու համար ամեն բան քաշե-
լու, ամեն բանի ձեռք զարնելու,
ամեն բան ընելու պատրաստ ըլլա-
լու ենք : Այն ազնիւ հայրերն ու
մայրերը որ իրենց որդւոցը համար
զոհ կ'ըլլան, հազուադիւս չեն,
բայց կան նաեւ շատ ազնուական
տղաքներ ու անձնանուէր աղջիկ-
ներ որոնց գեղեցիկ վարքը հիաց-
ման և ցաւակցութեան նիւթ մըն է :

Այս գեղեցիկ եւ ազնիւ օրի-
նակները անթիւ են : Բայց մենք
Քանդակի վիճակին գլխաւոր քա-
ղաք Օսիլեաքցի երիտասարդի մը
օրինակը յիշենք :



Առաքինի եւ հարուստ Օսիլեաքցի տիկին մը իր ամուսինը եւ իր հարստութիւնը կորսնցուց յանկարծական թշուառութիւններու իրարու ետեւ իր վրան գարովը ։
 Իր անունը Վիճիէ տիկին կ'ըսուէր ։

Իրեն մնացեր էր միայն մէկ տղայ մը, որ ան ատենը Օսիլեաքի վարժարանին մէջ աշակերտ էր ։

Յովհաննէս Վիճիէ աղէկ աշակերտ մըն էր, հնազանդ, ուսումնասէր, իր ընկերներուն սիրելի եւ իր ուսուցիչներէն մեծարուած ։

Հանդիսական պարգեւաբաշխութիւններու ատեն, որ դպրոցական տարին կը լմնցնեն, միշտ շատ մրցանակ կ'առնէր, եւ ասով իր համեստութիւնը չէր կորսընցըներ ։ Յովհաննէս աղէկ գիտէր ոչ

իր ընտանիքը ճակտորդութիւններ
կրեր էին, բայց անոնց ո՛ր աստի-
ճանի ըլլալը չէր գիտեր. իր մօրը
թշուաութեան մէջ ինկած ըլլա-
լուն մանրամասն տեղեկութիւն
չ'ուներ :

Դպրոցին առատաձեռնութիւնը
մած վերակացուն միտքը դրեր էր
անիկա իր դպրոցին մէջ առանց
վարձք պահանջելու պահել : — Եր-
բոր մեծնայ, կ'ըսէր, ինձի կը հա-
տուցանէ — : Սակայն ասիկա բա-
ւական չէր, ²⁵ դպրոցին ծախքէն դատ
երիտասարդ աշակերտին պէտք կ'ըլ-
լար զգեստներ, գիրքեր, կտաւիք
եւ այլ ուրիշ շատ բաներ : Ասոնք
ի՛նչպէս մատակարարելու էր :

Մէկ քանի ողորմած մարդիկ,
մանաւանդ վիճակին ուստիկանը, եւ
Չեանց Մայր Աստուածածնին (Նօ-
թրոս — տամ — տէ — նէժ) եկեղեց-
ւոյն քահանան ընկերութիւն ըրած

էին թշուառ ընտանիքին պիտայք-
ները հոգալու համար :

Քայց իրենց օգնութիւնները
բաւական չէին ըլլար հիւանդկախ
մօրը եւ տղուն ծախքերը մէկէն
հոգալու : Խորհուրդ ըրին իրենց
մէջը եւ որոշեցին որ խեղճ այրի
կինը հիւանդանոց դրուի :

Պէտք է այս դիտաւորութիւնը
առաջուց իմացնել երիտասարդ ա-
շակերտին :

Այս պաշտօնը դժուար բան
էր, կը վախնային տղուն վրան վիշտ
եւ յուսահատութիւն բերելէն :
Քահանան վրան առաւ առ բանը,
եւ սա ճամբան բռնեց : — Հինգ-
շաբթի օր մըն էր, այսինքն, աշա-
կերտներուն դպրոցէն դուրս ել-
լալու յատուկ օրը : Քահանան դըպ-
րոցը գնաց, Յովհաննէսը փնտուեց
որպէս զի այն օրը իր տունը ան-
ցընէ ժամանակը : Տղան ուրախա-

Թեամբ լցուած, կը հագնի իր նոր
զգեսաները ինչպէս որ կ'ընէին առ-
վորաբար պարտելու կամ դբօսան-
քի մը համար, եւ զուարթու-
թեամբ քահանային հետ դուրս
կ'ելլէ :

Քահանան անիկա իր տունը կը
տանի եւ իր խուցը կը մտնէ : Խուցին
մէջ սեղանի մը վրայ էր իր ժամա-
գիրքը : Քահանան գործքի համար
դուրս կ'ելլէ, խոտանալով տղուն
շուտով գալ, եւ անիկա մինակ կը
ձգէ խուցին մէջ :

Յովհաննէս մինակ մնացած, եւ
չգիտնալով թէ ի՞նչ բանի դբօսի, կը
տեսնէ ժամագիրքը սեղանին վրայ :

Զկարծեր թէ անզգուշութիւն
մըն է աղօթքի գիրք մը բանալը,
կը սխալի, բայց այս սխալը այս պա-
րագայիս մէջ գրեթէ ներելի էր :
Ա՛ռնէ վերջապէս ժամագիրքը եւ
կը բանայ : Մէջէն թուղթ մը կը

ասհի եւ տախտակին վրայ կ'իյնայ :
 Յովհաննէս կը վերցընէ անիկա , եւ
 իր աչքերը ակամայ կ'ուղղուին վը-
 րան պարունակուած բաներուն :
 Ի՞նչ կը տեսնէ , իր մօրը հիւանդա-
 նոցը ընդունելու տոմսակը :

Տղուն աչքերը ամպով մը կը
 ծածկուին , տոմսակը կ'իյնայ իր
 դողդոջուն ձեռքերէն : Ար կարծէ
 թէ աղէկ չէ կարդացած , նորէն
 կ'առնէ աղետալի թուղթը , նորէն
 նայնը կը կարդայ : Իրաւցընէ իրեն
 մօրը վրայօք է բանը , իր մօրը հիւ-
 ւանդանոցին մէջ ընդունուելուն
 տոմսակն է այն թուղթը :

Տղան կը շփոթի եւ կը դողայ ,
 արտաշարժ աղաղակ մը կ'ելլէ
 կուրծքէն . — Ո՛հ , հիւանդանոցը , իմ
 մայրս հիւանդանոցը — : Ան ատենը
 կ'իմանայ իր ընտանեաց վիճակը որ
 մինչեւ ան ատեն իրեն չէին գիտ-
 ցուցեր :

Քանի մը վայրկեան խորին մը
տածութեան մը մէջ ընկղմած կը
մնայ, չցաւիր իր ընտանեաց կոր-
արնցուցած շքեղ վիճակին վրայ, չը
մտածեր այն հարատութեանը կո-
րուատին վրայ, որ օր մը պիտի ժա-
ռանդէր: Ուրիշ բան չմտածեր,
բայց միայն իր ամենացաւալի թըշ-
ուառութեան մէջ ընկղմած եւ
աղքատանոց մը արարուելու ըս-
պառնալեաց ենթակայ եղող մօրը
վրայով:

Իմ մայրս հիւանդանոց երթանց,
ըսաւ, ո՛հ բնաւ երբէք: Իսկոյն այս
վայրկենին իր ընեւեքը կ'որոշէ, որ
դիական սէրը չլսուած զօրութիւն
մը կու տայ իրեն, որքան որ տղայ է,
կատարեալ մարդու մը քաջութիւն
կ'զգայ վրան, ինչպէս որ անոր հաս-
տատամտութիւնը եւ յարատեւու-
թիւնը կ'ունենայ ետքէն ալ:

Կը մեկնի երիցատունէն, ա-

ուանց մէկէ մը տեսնուելու դպրոց
կ'երթայ, կը ձգէ իր կիրակի օրուան
զգեստները, ամէն օրուանները կը
հագնի, ու նորէն կուգայ:

Քահանան որ տղին երթալէն
քիչ մը ետքը խուցը դարձած էր,
չատ դարմացեր էր անիկա հոն չը
գտնելուն համար, եւ անոր հետա
նարուն վրայ անհանգիստ էր: Եր
բոր տեսաւ անոր նորէն գալը,
առջի բերանը շտեաւ հանդերձին
փոփոխութիւնը, ու անոր լսաւ:

— Ո՛հ, խեղճ տղայ, բացեր ես
իմ ժամագիրքս, գիտես ամէն բան,
եւ գացեր ես լալու համար պահ
ուրտելու: — Ո՛չ, Տէր Հայր, լսաւ
տղան, չեմ լացած. . . իմ մայրս
բնաւ հիւանդանոց չը պիտի եր
թայ, հոն տրամութենէն կը մեռ
նի: Կը ձգեմ կ'ելլեմ դպրոցէն:
Կ'երթամ իմ մօրս հետ կը մնամ:
Կ'օղնեմ իմ մօրս:

Քահանան արայ հասակաւ մե-
կաւ մը ասանկ անակնկալ տպաւո-
րութենէն սիրար շարժելով, չկր-
ցաւ իր արցունքը բռնել: Գրկեց
տղան գորտիանօք եւ անոր լսաւ.
— Բարեկամս, կը կտրանցնես քու
ապագայդ. ասկէ դատ, ի՞նչպէս
պիտի կրնայ քու հասակդ արայ մը
իւր մօրը օգնել — :

— Աստուած ինձի դորութիւն
կուտայ, եւ այս դորութիւնը պիտի
ածի հասակիս հետ: Զգեցի իմ գե-
ղեցիկ հաղաւատներս՝ աչ չհազնե-
լու ուխտիս, անոնք պիտի ծախեն,
իմ մօրս աս աջին օգնութիւնները
ընելու համար: Յովհաննէսին միտքը
դարձնելու համար, քահանան կան-
չեց ան անձերը, որ աս ընտանիքին
հոգ կը տանէին այսինքն դպրոցին
վերակապուէն ու ռասիկանը, որոնք
պարտաւ սեղը հակառակեցան
տղին խորհուրդին:

— Տղան, կ'ըսէին անոր, մտածէ
անգամ մը քու վերջդ : Գու ուս-
մունքներդ յաջող կերպով առաջ
կ'երթան : Դպրոցէն ժամանակին
ելլելով, պիտի կրնաս քու կենացդ
ընթացքը բարելաւել : Անշուշտ պի-
տի ստանաս կառավարական օգնու-
թիւններ :

Պիտի ըլլաս ինչ որ ուզես, պաշ-
տօնակալ, երկրաչափ, բժիշկ, փաս-
տաբան, դուն նորէն պիտի ստա-
նաս ընտանեացդ կորսնցուցած վի-
ճակը, անշուշտ դուն կը հանես ան-
ատեն քու մայրդ աղքատանոցէն,
իր ծերութեան օրերուն պատիւ
եւ օգնական կ'ըլլաս : — Ա՛հ, պա-
տասխանեց աղան, դուք իմ մայրս
չէք ձանձնար, թէ որ աղքատանոցը
մտնէ, վեց ամսուան մէջը կը մեռ-
նի : Շատ երջանիկ պիտի ըլլայի թէ
որ ուսմունքներս լմնցնէի բայց իմ
պարտաքս, զոր սրտովին կ'զգամ, իմ

մօրս հետ կենանն է, անիկա խնա-
մենն է, եւ անոր օգնենն է: Իմ
պարտքս պիտի կատարեմ, ու եր-
ջանիկ պիտի ըլլամ անիկա կատա-
րելոյս — :

Յովհաննէս արդէն փոքրիկ գե-
ղեցիկ գրքատուն մը կազմած էր
ստացած մրցանակներովը, ոսկիէ
ժամացոյց մը ունէր, որն որ սատի-
կանը իրեն տուեր էր, գեղեցիկ ըզ-
գեսաններ ունէր, ամենը ծախել
տուաւ, պզտիկ վաճառականու-
թեան մը ձեռք գարներու համար:
Փերեզակ մը եղաւ, կարկանդակ ու
տղայոց խաղալիք կը ծախէր, ամեն
մարդ կը գարմանար վարքին վրայ,
եւ կը հաճէր անոր հետ առուտուր
ընելու: Սասնկով թէ իր մօրը եւ
թէ իրեն համար հաց վասակեցաւ:

Յովհաննէս երբոր մեծցաւ ու
զօրաւոր եղաւ, պանդոկի մը մէջ
բեռնակիր եղաւ. աս պաշտօնը շատ


դժուարին արուեստ մըն է, բայց
բաւական կը վաստկէր իր մայրը ա-
ղէկ նայելու չափ ։

Արովհետեւ քսան եւ հինգ տա-
րիէ 'ի վեր օր մը խեղճ այրի հիւանդը
մինակ չձգեց, որդիական կատարե-
լագոյն անձնանուիրութեան օրի-
նակ ըլլալէն չդադրեցաւ. անոր քով
կանցընէր ամեն այն ժամանակնե-
րը, որ իր զբաղմունքները կը նե-
րէին, եւ միշտ իր ձեռքին վրայ
մայրը կըրթընած կ'երթար արե-
ւոտ օրեր դաշտերուն մէջ հնձա-
քաղին թողած հասկերը քաղելու
համար ։

Պանդոկի այսպիսի ծառայու-
թեանը մէջ մարդս շատ արհամա-
րանք կը կրէ, բայց Յովհաննէս Ա ի-
ժիէ՝ թէեւ վեհ սիրտ մը ունէր,
սակայն անտրտունը կը համբերէր
ճանապարհորդներուն անտեղի հա-
ճոյիցը ու յանդգնութիւններուն,

որ չէին գիտեր թէ ո՞վ էր ինքը, եւ
ինչ արժէք ունէր. գիտես թէ իր
ազնիւ վարուցը զգացմանցը մէջ կը
գտնէր ամեն բանի համբերելու զօ-
րութիւնը :

Բայց անոնք որ անիկա կը ձանչ-
նային, կը յարգէին ու կը զարմա-
նային անոր վրայ. իր դպրոցին հին
ընկերները, որքան որ իրենց ընկե-
րական վիճակը չքեղ ալ էր, միշտ
առաջուան մտերմութիւնը անոր կը
ցուցնէին, չկար մէկը անոնց մէ-
ջէն որ երբոր խեղճ բեռնակրին
հանդիպէր, անոր ձեռքը սեղմելը
եւ անոր հետ խօսելը իրեն սլատիւ
ու զուարճութիւն չսեպէր :



ԳԼԽԱԻՈՐ ՄԱՐԴՈՑ, ԾԵՐԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ
ՊԱՐՏԻ ԵՂԱԾ ՄԵԾԱՐԱՆՔԸ

Կան անանկ մարդիկ որոնց հա-
մար որդիական զգացմանը քիչ կամ

չատ մօտեցող սէր մը իմանալու ենք :
Ինչպէս կը պարտաւորինք մեծա-
րել մեր գլխաւորները , դատաւոր-
ները եւ հասարակաց իշխանու-
թեան ամեն աւանդապահները :

Նաեւ պէտք է որ կրօնից պաշ-
տօնեայները մեր տղայութենէն 'ի
վեր մեր մեծարանացը առարկայ
ըլլան . իրենց անձը մեծարելը մի-
այն բաւական չէ , պէտք է անոնց
պատուէրներուն ալ հետեւիլ ,
պէտք է մտիկ ընել բարեպաշտա-
կան մտադրութեամբ այն Աստուա-
ծային բարոյականութիւնը , որ մե-
զի Աստուծոյ կողմէն կը քարոզեն ,
մանաւանդ պէտք է որ մեր վար-
քը այն բարոյականութեանը յար-
մարցընենք :

Իսաստիարակը որ մեր տղայու-
թեանը ինամբ տարած է , Աստու-
ծոյ ու մեր ծնողաց գործածած
պաշտօնեան է , որ մեր միտքը բա-

նայ, եւ մեղի բարի վարուց վար-
ժեցնէ. այս պատճառաւ միշտ մե-
ղի սիրելի ըլլալու է: Երբոր մեր
կրթութիւնը կը լմնայ, պէտք է
պահենք անոր համար խորին երախ-
տագիտութիւն մը, ու սիրոյ եւ մե-
ծարանաց նշաններ ցուցընենք անոր:

Տղայ մը պէտք է որ իրմէ մեծ
անձերուն միշտ պատիւ ընէ, բայց
մանաւանդ կնիկ մարդոց ու ծերե-
րուն: Ով որ ծերի մը վրայ կը ծի-
ծաղի, չար ու վատ մէկն է, ու ա-
մեն մարդ զինքը կ'անարգէ:

Պէտք է պատուել ծերերը ամեն
կերպով, կրել համբերութեամբ
այն գէշ բնաւորութիւնը, որ եր-
բեմն հասակնին իրենց կ'ազդէ.
պէտք է ամեն տեղ պինտ աղէկ տե-
ղերը զիրենք նստեցնել, եւ իրենց
ամեն տեսակ ակնածութիւններ ու
յարդանքներ ցուցընել:

Թէ որ մէկը մեր հօրը կամ մեր

մօրը բարու թիւն մ'ըրած է, չկոր-
արնցընենք բնաւ անոր յիշատակը ։
Թող այն անձը մեզի համար մաս-
նաւոր մեծարանքի մը առարկայ ը-
լայ ։ Տղայ մը իր հօրն ու մօրը ա-
տելութիւնները իրեն սեպհակա-
նելու չէ, որովհետեւ կրօնքը մե-
զի կ'արգիլէ որ ո՛ր եւ իցէ մէկը չա-
տենք, եւ մեզի կը պատուիրէ նե-
րել անոնց որ մեզի շարիք ըրած են.
պէտք է որ տղայ մը մասնակից ը-
լայ այն երախտագիտութեանը որ
իր ծնողքը կը նուիրեն իրենց բա-
րերարներուն, եւ պէտք է որ այս
երախտագիտութեան զգացմունք-
ները ծնողաց իրեն թողուցած ժա-
ռանգութեան մէկ մեծագոյն մա-
սը համարի ։

Երբեմն երեսէ ձգուած կամ
խեղձ տղայ մը՝ աղգականէ մը կամ
օտարէ մը հօր պէս ինամքներ կ'ըն-
դունի ։

Երբեմն հօրեղբայր մը կամ մօ-
րեղբայր մըն է, որ կը կրթէ իր եղ-
բօրորդին կամ քեռորդին, եւ ա-
նոր խնամակալութիւնը իր վրան
կ'առնէ. երբեմն ողորմածասիրտ
մարդ մը որքի մը վրայ կը գլծայ,
անոր պիտոյքները կը հոգայ, անոր
տղայութեանը վրայ կը հսկէ, եւ
անոր արուեստ մը կը սովրեցնէ
կամ սովրեցնել կու տայ, որ իր
ապրուստը ճարելու կարող ըլլայ :

Այսչափ առատաձեռն բարե-
րար մը հօր ու մօր չափ իրաւունք
ունի : Տղան կը պարտաւորի անխկա-
մեծարել, սիրել, անոր հնազանդիլ,
վաստահիլ եւ խօսքը մտիկ ընել.
պէտք է որ բոլոր կեանքին մէջ ա-
նոր համար երկիւղած ու գորովա-
լից երաստագիտութիւն մը պահէ
արտին մէջը, ու զայն յայտնէ ա-
ւելի գործքերով քան թէ խօսքե-
րով :

Ահա այսպէս ըրաւ փոքրիկ Ատէլլան, որուն վարքը պիտի պատմենք հիմայ :

Այսպէս կը վերջացնենք այս տղայոց համար ընտրուած փոքրիկ գիրքը ինչպէս որ սկսեցինք իրենց յիշեցնելով թէ երախտագիտութիւնը սուրբ պարտք մըն է, առանց երախտագիտութեան բնաւ առաքինութիւն չ'ըլլար, եւ հետեւաբար ալ երջանկութիւն :

ՓՈՔՐԻԿ ԱՇԱԿԵՐՏՈՒՆԻՆ

Ատէլլա՛ Գայիէ Պզանասնի մէջ ծնած աղքատ զինուորի մը աղջիկ էր : Իր տղայութեան ժամանակը Փարիզի մէջ կտաւեաց աշխատող Տիւքօռմիէ տիկինին խնամքները ընդունեց, որ իրեն իր աջեատը սովորեցուց :

Ատէլլա՛ իր բարերարութիւն

Հնորհիւր աղէկ գործաւոր մ'ըլլալով, իր ծնած երկրին մէջը կ'աշխատէր, եւ պատուով իր ապրուստը կը ձարէր: Մէկ մըն ալ իմացաւ որ Տիւքումիէ տիկինը հիւանդացեր էր: Ամեն բան թողուց, ու վազեց անոր քով գնաց:

Ան ատենէն 'ի վեր Տիւքումիէ տիկնոջ առողջութիւնը օր ըստ օրէ աւելի գէշցաւ: Կուրծքը սաստիկ բռնուեցաւ, շնչառութեան դժուարութիւններէն յաճախ կը տանջուէր, անանկ որ աշխատելու եւ ծանր գործի մը ամենեւին չէր կրնար ձեռք դարնել: Գործատանը բեր էւ տանը հոգերը բոլորովին վրան առաւ Ատէլլա, եւ իր խորին եւ գորովալից երախտագիտութեամբը հիւանդին վիճակին պէտք եղած բոլոր ծառայութիւնները կ'ընէր:

Եւ որովհետեւ հիւանդութիւ-

նը շատ տեւեց, ժամանակ մը եկաւ
որ Տիւքոսմիէ տիկինին իր պիտոյք-
ներուն հասնելու շափ ստակ չմը-
նաց, ուստի պարտաւորեցաւ ծա-
խել տալ գրեթէ բոլոր կահ կարա-
սին. ինչ որ տանը մէջ բարեկեցու-
թիւն մը կերեւցընէր, աներեւոյթ
եղաւ. քիչ ժամանակէն տանը մէջ
թշուառութեան եւ զրկանաց տե-
սարան մը կը տիրէր :

Ատելլա ամեն բանի հասաւ,
բնաւ չէր վհատեր ոչ կրած նեղու-
թիւններէն, ոչ ամեն օրուան յան-
ձրն առած զրկանքներէն, միայն
հիւանդը ինամելու համար աշխա-
տութիւնը ձեռքէն կը ձգէր, շատ
անգամ ալ գիշերը կ'ելլէր հիւան-
դին վիճակին պահանջած դարման-
ները պատրաստելու համար :

Երբեմն հիւանդը ինքզինքը քիչ
մը աղէկ գտնելով, կ'ուզէր նորէն
գործքի ձեռք դարնել, բայց իր աչ-

քին աղարու թեանը պատճառաւ ,
Ատէլլա իր վարպետու հին շինածը
քակելու եւ նորէն սկսելու կը
պարտաւորէր : Միայն այս բանը ը-
նելու համար անկէց կը պահուը-
տէր եւ կ'ըսպասէր որ քնանայ որ-
պէս զի իրեն ցաւ չտայ :

Թեղճ հիւանդը մեռնելէն ու թ-
ամիս առաջ բնաւ անկողինէն չ'ե-
լաւ : Ատէլլա չ'ուզեց հաճիլ որ ա-
նիկա հիւանդանոցը դնեն , հաս-
ցուց իր յատուկ վասարկածները ,
եւ պատանոց դրաւ իր կահ կարա-
սին հիւանդին կարեւոր ծախքերուն
հասնելու համար :

Այս անձնասիրութիւնը հիաց-
ման արժանի ըլլալուն պատճառը
այն է որ մէկ քանի շաբաթ , մէկ
քանի ամիս չտեւեց , հասպա շարու-
նակ տասն ու երկու տարի , առանց
այս առաքինի աղջկանը եռանդը
վայրկեան մը թուլնալու :

ՎԵՐ ԶԻՆ ԽՐԱՏՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔ

Գեռահասակ աշակերտաց հաճար յատկացած այս փոքրիկ գիրքը վերջացրնելէն առաջ, պէտք է որ իրենց ապագային վրայ մէկ քանի խիստ հարկաւոր տեղեկութիւններ տանք անոնց :

Առաջինը այն է որ իրենց ծնողացը հնազանդ եւ երկիւղած երեւելով անզգալի կերպով եւ առանց աշխատութեան պիտի ստանան գրեթէ զիրենք բարի մարդ ընող բոլոր հանգամանքները :

Արդարեւ ընտանեկան առաքինութիւնները բոլոր ուրիշ առաքինութիւններուն վարժութիւն մը են, ու ընտանեկան պարտուց կատարելը բոլոր ուրիշ պարտքերուն կատարումը քաղցր ու դիւրին կընէ :

Կանուխկէկ ամեն ազնիւ բաներու վարժուած հոգին, ալ վերջը

չկրնար ուրիշ սովորու թիւներու հա-
կիլ, աղայու թենէն 'ի վեր մաքուր
եւ սուրբ սիրով անած հոգին ալ ու-
րիշ անունդ չ'ուզեր :

Օրինակի համար, այն մարդը որ
իր ընտանեացը անձնանուէր է, կը
սիրէ աշխատութիւնն ու գործու-
նէութիւնը, որոնց օգնութեամբը
կրնայ իրեն բարեկեցութիւն մը
պատրաստել, կը սիրէ կարգ ու կա-
նոնը որոնք մինակ կրնան այս բա-
րեկենդանութիւնը հաստատել : Աւ-
րեմն ընտանեկան առաքինութիւն-
ներ գործելը՝ բոլոր գովելի եւ ազ-
նիւ զգացումներու ծնանելուն պատ-
ճառ կ'ըլլայ : Մաքուր՝ եւ միշտ նա-
րածին դուարձութիւններու աղբիւր
մըն է անիկա : Մանաւ անդ անով է որ
մարդ երջանկութեան կ'արժանա-
նայ եւ զայն կը վայելէ : Երջանկու-
թիւնը սովորաբար առաքինի եւ քաջ
միաբան ընտանիքի մը վարձքն է :

Ի նչպէս դուրսը կրնանք գտնել
անկեղծ եւ տեւողական սէրեր, թէ
որ Աստուծոյ մեր տանը մէջ գրած
սէրերը չճանչնանք: Արժանի կըր-
նանք ըլլալ արդեօք ճշմարիտ զուար-
ճութիւններ վայելելու, թէ որ
մենք անզգայ ըլլանք անանկ ամե-
նամարտը զուարճութիւններու ու
րոնց աղբիւրը բնութեան եւ առա-
քինութեան մէջն է:

Ուրեմն կարելի է որ բնաւ եր-
ջանկութիւն չը գտնէ ան տղան որ
ընտանիքէն դուրս կը փնտռէ զայն:

Ո՛ր կը յուսայ երջանկութիւն
գտնել: Արդեօք խաղալիքներու եւ
զբօսանքներու մէջ, կամ աղմկա-
լից զբաղանայ մէջ կը փնտռէ զայն:

Սակայն զբօսանքներն ու խաղա-
լիքները քանի մը վայրկեան միայն
մեզ կը զբօսցունեն, աղմկալից ըզ-
բաղմունքները միայն մեզ քիչ մը
կը թմրեցնեն եւ սրտերնիս պա-

բայ կը թողուն: Ընդհակառակն
ընտանեկան ու բախտ թիւնները կա-
տարեչապէս գոհ կ'ընեն արտերնիս,
իրենց զուարճութիւնը բնաւ չըս-
պաւիր, որքան որ անոնք կը վայելէ
մարդ այնքան ալ կուզէ վայելել:

Ժամանակը մեզի ուրիշ զուար-
ճութիւններէն ձանձրացընելով, ա-
սիկա մեզի աւելի ծանրագին կ'ընէ:

Ասկէց դուրս միմիայն անցաւ որ
եւ երկդիմի զուարճութիւններ կան,
եւ առտ բերկրութիւններ կը վայել-
լենք: Անկեղծ սէրը, ճշմարիտ զուար-
ճութիւնները ընտանեաց մէջն են,
բարի եւ առաքինի ծնողաց, խնա-
մարկու եւ գորովալից կնոջ մը, եր-
կիւղած եւ հնազանդ զուակաց եւ
անանկ բարեկամներու մօտ են, ո-
րոնք արիւնն ու սէրը մեզի եղբայր
ըրեր են: Այս ասիելի էակները կը
մեղմացընեն մեր վիշտերը անտնոց
մտածանքից ըլլալով, մեր ուրախութեան


24

Թիւնները անունք ալ զգալով կըրկ
նապատիկ կըլլան մեղի համար :

Երանի թէ այս վերջին խրատը
այն սիրելի աղայոց յիշողութեանը
մէջ մնար, որունք նորածին բանա-
կանու թիւննին վարժեցընելու հա-
մար, այնչափ մտադրու թեամբ իրենց
պարտքերը սովրելով իրենց համար
նոր կարդալու արուեստին ալ տե-
ղեկացան :

Երանի թէ որդիական սէրը, որն
որ իրենց սիրտը ազդու կերպով տը-
պաւորեցաւ, անունք զարգացընելը
մարդս պատուաւոր եւ բարի քա-
ղաքացի ընող առաքինու թիւններով :

Երանի թէ մատաղ հասակնուն
մէջ իրենց ծնողացը պատիւ եւ ու-
րախու թիւն ըլլալէն ետեւ, վայե-
լէին այն բովանդակ երջանկու թիւնը
որ ընտանեկան վեանքը կընայ տալ :



C

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0415196

۱۷۴۵
۱۷۴۵